

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ  
(Յունիս 14-Յուլիս 7-Յուլիս 25, 1915) ԵՒ  
Ա-ԴՕՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿԵԱՆ  
rubensahakian@mail.ru

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին (1914-1917) թուրքական կառավարութիւնն իրականացնում է Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի հայաբնակ գաւառների հայութեան ցեղասպանութիւնը։ Նման դժնդակ պայմաններում հայութիւնը կարողանում է մի շարք վայրերում, ինչպէս օրինակ՝ Վանում եւ Համանուն նահանգում, Տարօնում, Շապին Գարահիսարում, Մուսա Լեռան վրայ, Ֆընտընագում, Ուրֆայում եւ այլ վայրերում դիմելու ինքնապաշտպանութեան։ Առաւել յաջող դիմադրութիւնն են ցուցաբերում Վանի հայերը, որը զգալի թուրք մարդկանց փրկուելու հնարաւորութիւնն է տալիս։

Վանի նահանգապետ Զեւդէթ բէյն ունենալով մօտ տասն անգամ գերակշիռ ուժեր, հրետանի եւ գնդացիրներ, չի կարողանում կոտրել հայութեան դիմադրութիւնը։ Նրանց պայքարն ու ռուսական բանակի եւ նրա կազմում հայկական կամաւորական խմբերի յառաջացումը նպաստում են որ Վան քաղաքի հայութիւնը յաղթանակած դուրս գայ անհաւասար պայքարից։

1915 Մայիսի 7ին ռուսական հրամանատարութիւնը Արամ Մանուկեանին, կամ էլ ինչպէս նրան որակել է Վարազդատ Տերյեանը՝ «Վանի հասարակական հսկային»<sup>2</sup>, նշանակում է Վանի եւ ազատագրուած գաւառների ժամանակաւոր կառավարիչ (նահանգապետ)։ Ինչպէս նշում է Վան այցելած Ա-Դօն (Յովհաննէս Գրիգորի Տէր-Մարտիրոսեան, 1867-1954)<sup>3</sup> «Ուսւ բանակի հրամանատարը զնահատեց հայ ժողովորդի մղած պայքարը ու տարած յաղթանակը եւ հրամակութեան համար Վանի կողիները դեկավարող Արամին, լիազօրելով նրան կազմել հայկական ժամանակաւոր կառավարութիւն»<sup>4</sup>։

Վասպուրականում հայկական իշխանութեան հիմնումը պատահական չէր։ Դա արդիւնք էր մի քանի սերունդների հետեւողական գործունէութեան։ Նրանք կաթիլ-կաթիլ, դարեր շարունակ, բնակչութեան շրջանում սերմանել էին պետականութեան գաղափարը։

Կազմակերպում են ազատագրուած գաւառների եւ Վան քաղաքի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը եւ վարչութիւնը, կրթական եւ ոստիկանական տեսչութիւնները, քաղաքապետարանը, գաւառային վարչութիւնը, դատարանը եւն։

Կարօ Սասունու բնորոշմամբ՝ «Հայոց ճակատագիրը գործնական կնանքի մէջ տնօրինող հայարական կամքը թիֆլիսէն և Երևանէն փոխադրուած էր Վան։ Պատգամը Վանէն կու գար»<sup>5</sup>։

Հայութեան համար Վանը դարձել էր «Աւետեաց երկիր», ուր ձգտում էին օր առաջ հասնել շատերը, որպէսզի անձամբ համոզուեն, որ տեղի հայութիւնը ոչ միայն փրկուել, այլեւ սկսել է արարել հայոց պետականութեան սաղմը՝ Վանի նահանգապետութիւնը:

Վանի նահանգապետութիւնը հարկադրուած էր լուծել բազմաթիւ հիմնախնդիրներ՝ սկսած գաղթականներին իրենց բնակավայրերը տեղափոխելուց, մինչեւ նրանց անվտանգութեան ապահովումը: Այդ նպատակի համար կազմակերպւում են մի շարք մարմիններ: Վանը բաժանւում է գաւառների եւ գաւառակների: Նշանակւում են նրանց ղեկավարները: 1915 Մայիսի 7-22ին նահանգապետի կողմից կատարւում են հետեւեալ նշանակումները.

Ա. Կալուծական-Գաղթականական Մարմին.- Արտակ Դարբինեան (նախագահ), անդամներ՝ Աւետիս Թերզիքաչեան, Ա. Միրզախանեան, փաստաբան Կարապետ էֆենդի եւ Հ. Ժամագործեան:

Բ. Քաղաքապետութիւն.- Պետրոս Մէօքէեան (նախագահ), անդամներ՝ Վ. Տէր-Պողոսեան, Վահան Մարութեան, Սիմոն Գափամանեան եւ Ա. Վուկունիկեան:

Գ. Դատարան.- Աղարէկ էֆենդի (նախագահ), անդամներ՝ Ռուբէն Շատուորեան, Թերջան էֆենդի (գործադիր պաշտօնեալ), Ե. Քաջունի եւ Հրանտ Գալիկեան (դատախազ):

Դ. Տնտեսական Մարմին.- Գէորգ Ճիտէնեան (նախագահ):

Ե. Ընդհանուր քննիչ.- Կարապետ էֆենդի Ալճեան:

Զ. Նպաստից Յանձնաժողով.- Հ. Մկրտիչեան (նախագահ), անդամներ՝ Գ. Պարիկեան, Փ. Մարութեան, Ա. Պարսամեան, Կ. Գափամանեան եւ Պ. Թաշճեանը:

Է. Տների Յանձնաժողով.- Մ. Հիւսեան (նախագահ), անդամներ՝ Մ. Երամեան, Ա. Խոճամիրեան եւ փաստաբան Կարապետ էֆենդի:

Ը. Կրթական Մարմին.- Մ. Մինասեան (նախագահ), անդամներ՝ Մ. Նալպանտեան, Ե. Ռշտունեան եւ Ռ. Մելիք-Աղամեան:

Թ. Երկրագործական Մարմին.- Խաչիկ Զենոքեան (նախագահ), անդամներ՝ Ա. Աւետաղյեան, Ռոպինսոն Գլճեան<sup>5</sup>:

### Գաւառների Եւ Գաւառակների Ղեկավար Կազմը

1. Շահպաղիի գաւառապետութիւն.- Արէլ Աղաւնեան (գաւառապետ), Մինաս Օւիկեան (օգնական), Ստեփան Համբարձումեան (թարգմանիչ):
2. Արտամետի գաւառապետութիւն.- Յովհաննէս Գոմէնեան (գաւառապետ), Լ. Մելիք-Դատեան (թարգմանիչ-օգնական):
3. Ոստանի գաւառապետութիւն.- Լեւոն Գաբրիէլեան (գաւառապետ), Զաւեն Կորկուտեան (օգնական), Հ. Փալապերեան (թարգմանիչ):
4. Ալիւրի գաւառապետութիւն.- Հ. Հիւսեան (գաւառապետ), Ա. Շալճեան (օգնական), Ա. Առաքելեան (թարգմանիչ):
5. Կիւսնենցի գաւառապետութիւն.- Փ. Մարութեան (գաւառապետ):
6. Արճշշի գաւառապետութիւն.- Նշան Ժամագործեան (գաւառապետ), Գ. Թովմասեան (թարգմանիչ):
7. Արճակի գաւառապետութիւն.- Շիրին Եղիազարեան (գաւառապետ), ոստիկանապետ՝ Տաղվերանցի Մկօ:
8. Գործօթի գաւառապետութիւն.- Գագիկ Թոխմախեան (գաւառապետ):

9. Հայոց Զորի գաւառապետութիւն.- Նշան Նալպանտեան (գաւառապետ), Ն. Մելճքեան (ոստիկանապետ), Ա. Համբարեան (թարգմանիչ):
10. Շատախի գաւառապետութիւն.- Ա. Մեսրոպեան (գաւառապետ), Ա. Պաղտասարեան (ոստիկանապետ):
11. Ճանիկի գաւառապետութիւն.- Ա. Մեմերճեան (գաւառապետ), Ա. Տէր-Սիմոնեան (ոստիկանապետ):

Նշենք, որ գաւառապետերի կազմի մի մասը յետագայում փոփոխում է: Կատարւում են նոր նշանակումներ:

Այդեստանի եւ Քաղաքամէջի պաշտօնեաների եւ ոստիկանների ընդհանուր թիւը կազմել է 152, իսկ գաւառներինը (ոստիկանութեան հետ միասին)՝ 850 հոգի:

Առաջնահերթ խնդիրներից էր գիւղատնտեսական աշխատանքների վերսկսումը, որը հնարաւորութիւն կը տար ապահովել ոչ միայն ընակչութեան, այլև ոռուսական գորքի եւ հայ կամաւորների մատակարարումն անհրաժեշտ մթերքներով: Սակայն երկրագործական աշխատանքները դժուարանում էին այն պատճառով, որ լեռներում շարունակում էին գործել քրդական զինուած կազմաւորումներ՝, որոնք յարձակումներ էին կատարում հայկական ընսակավայրերի վրայ՝ արգելելով հացահատիկի հաւաքումը:

Արամը գիտակցելով, որ ընակչութեան անվտանգութեան ապահովութիւնն առաջնահերթ խնդիրներից է, ձեռնամուխ է լինում ոստիկանական ուժերի կազմակերպմանը: Նրանց հիմնական խնդիրն էր՝ հայկական, ասորական եւ եղդիների գիւղերի պաշտպանութիւնը: Կարելի է ենթադրել, որ Արամը ոստիկանական ոյժերի հիմքի վրայ յետագայում ցանկանում էր կազմակերպել բանակային ստորարարաժանումներ:

Վանի նահանգում տարածուած էին տարափոխիկ հիւանդութիւնները, ուստի նահանգապետութիւնը դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը (ԿՀԲԸ), Թիֆլիսի Հայոց Ազգային Բիւրոյին եւ այլ կազմակերպութիւնների, խնդրելով օժանդակել այդ խնդրում: ԿՀԲԸ Վան է գործուղում լիազօր Արովեանին, բժիշկներ Համազասպ Օհանջանեանին ու Քոչարեանին, նրանց հետ նաեւ երեք բուժակ եւ մէկ հիւանդապահ:<sup>9</sup> Յունիսի 20ին Վան է ժամանում Աղթամարի կաթողիկոսական տեղապահ եւ իջմիածնի Եղբայրական Օգնութեան կենտրոնական Յանձնաժողովի ներկայացուցիչ Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը:<sup>10</sup> Նրա նախագահութեամբ կազմւում է «Վասպուրականի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողով»ը, որում ընդգրկվում են Ա. Մանուկեանը, Սիրական Տիգրանեանը, Մարտիրոս Նալբանդեանը, Փանոս Թերլեմեզեանը եւ Յովհաննէս Մկրտիչեանը: Յանձնաժողովի առաջնահերթ գործը եղել է բուժարան բացել բժիշկ Թաշճեանի<sup>11</sup> գլխաւորութեամբ: Հեռագրուում է իջմիածնին, խնդրելով շտապ կարգով Վան ուղարկել բժիշկ եւ դեղեր, եւ բացել հիւանդանոց 55 մահճակալով<sup>12</sup>:

Մեծ քանակութեամբ մարդկանց կուտակումը Վանում սրում է քաղաքի առողջապահական վիճակը: Յունիսի 7ին նահանգապետի օգնական Պարոյր Լեւոնիանը գրում է. «Համաճարակը սաստկանում է: Անհրաժեշտ են բժիշկներ, ֆեղչերներ՝<sup>13</sup> դեղօրայք: Սով է սկսում: Պէտք է նիջոցներ ծեոր առնել օգնութիւն հասցնելու համար: Արամի վարչութիւնը անում է նոյն իսկ անհնարինը: Խիստ կարիք կայ ինտելիգենտ ուժերի»<sup>14</sup>:

Վանի հայկական իշխանութիւնը հաշուի առնելով, որ հայ, ասորի, եզդի, ինչպէս նաեւ քուրդ ու թուրք բնակչութիւնը թիւ թէ շատ վարժուած է օսմանեան օրէնքներին եւ նրա վրայ Հիմնուած դատաիրաւական համակարգին, չի գնում կտրուկ եւ արմատական փոփոխութիւններին Նահանգի ղեկավարութիւնը եւ գլխաւորապէս Արամը, գիտակցում էին, որ օսմանեան օրէնքներութեան արմատական վերանայումը կարող է յանգեցնել օրէնսդրական խառնաշփոթի, ուստի հրահանգուում է դատաիրաւական համակարգի աշխատակիցներին ժամանակաւորապէս առաջնորդուել օսմանեան օրէնքներով, իհարկէ, դրանց որոշ դրոյթներ վերանայելով եւ յարմարեցնելով ներկայ պայմաններին կարգադրուում է դատաիրաւական համակարգին, այդ թւում ոստիկանութեանը վերաբերող օրէնքները թուրքերէնից թարգմանել հայերէն եւ ներկայացնել նահանգապետարան: Օրէնքների նախագծերը կամ տարբերակները համապատասխան քննարկումներից եւ փոփոխութիւններից կամ ամրողութեամբ հաւանութիւն ստանալուց յետոյ պէտք է դրուէին շրջանառութեան մէջ:

Մայիսի սկզբներին թուրքական բանակի նահանջից յետոյ Վանի մահմեդական թաղամասում մնացել էին թուրքերի կողմից լքուած 865 թուրք կանայք եւ երեխաներ<sup>14</sup>: Վանեցիներն, ի տարբերութիւն թուրքերի, քաղաքացիական բնակչութեան նկատմամբ որեւէ ոտնձգութիւն կամ բռնութիւն չեն կատարում: Թուրք համաքաղաքացիներին Վանի հայկական իշխանութիւնը տեղաւորում է ամերիկեան եւ գերմանական միսիոներական հաստատութիւններում: Աւելին, քաղաքային ոստիկանութեանը յանձնարարուում է ապահովել նրանց անվտանգութիւնը: Նահանգապետութիւնը հաշուառում է նրանց անշարժ գոյքը՝ տներն ու այգիները, ու կազմում դրանց մանրամասն ցուցակը, որը պահպանուում է Հայաստանի Ազգային Արխիւում:

Յունիսի 23ին նահանգապետը եւ շրջանային վարչութիւնը յատուկ կոչով դիմում են հայրենակիցներին, խնդրելով օժանդակել Վասպուրականի բնակչութեանը: Նահանգապետարանը հայութեանը ներկայացնուում է արդէն կատարուած աշխատանքների մասին՝ պատրաստուում են հիմնել երկու հիւանդանոց՝ մէկը տարափոխիկ, իսկ միւսը՝ ոչ-վարակիչ հիւանդութիւնների համար: Յաջողուել է հաւաքել 10,000 ֆութ ցորեն, կարիքաւորներին տրուել են 8-10,000 ոչխար եւ 3,000 ից աւելի խոշոր եղջերաւոր անասուններ:

Սակայն առաջնահերթը վարակիչ հիւանդութիւնների դէմ պայքարն է: Նախատեսւում է նուազագոյնը մէկ քժիշկ՝ երկու գաւառի համար: Այսինքն՝ մէկ քժիշկը սպասարկելու է երկու հազար հիւանդի: Միաժամանակ կոչ է արւում երիտասարդութեանը՝ նուազագոյնը միքանի ամսով գալ Վասպուրական եւ ուժերն օգագործել գաղթականներին օգնելու համար:

Հաշուառուում են քաղաքում հայերին պատկանող մրգատու այգիները: Նրանց թիւը հասնում է 1400ի, սակայն մշակուում են միայն 625ը: Քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում, որպէսզի անինսամ մնացած այգիները եւս մշակուեն եւ արդ նպատակով առաջարկուում են վարձակալման ցածր գներ<sup>15</sup>:

Հայկական իշխանութեան գործունէութիւնը միշտ չէ որ հարթ էր ընթանում: Նշանակուած պաշտօնեանների մի մասը ընդօրինակած լինելով նախկին յուի բարքերը, թեթեւամտօրէն էին վերաբերուում իրենց պարտականութիւններին: Մինում էին նաեւ պաշտօնական դիրքի չարաշահման դէպքեր: Դժուար էր կարճ ժամանակահատուածում փոխել մի շարք մարդկանց մօտ արմատացած

հոգերանութիւնը, որի վրայ իր կնիքն էր դրել թուրքական երկարատեւ տիրապետութիւնը: Սակայն կարեւորը դա չէր: Կային նահանգային ղեկավարութիւն եւ իրենց գործունէութիւնը պարտաճանաչ կատարողներ, որոնց գործունէութիւնն օրինակ էր հանդիսանում միւսների համար: Իսկ ինչ վերաբերւում է անպարտաճանաչ պաշտօնեաներին, ապա նրանք հեռացւում էին ծառայութիւնից եւ փոխարինուում ուրիշներով<sup>16</sup>: Առաջին օրինակը ցոյց էր տալիս Արամը, որը կարողացել էր իր շուրջը հաւաքել լիրաւի նուիրեալ համախոնների, առանց հաշուի առնելու նրանց կուակցական պատկանելիութիւնը եւ սոցիալական ծագումը: Այսպէս, Վան քաղաքի ոստիկանապետ Դ. Փափազեանը ՀՅԴաշնակցութեան անդամ էր, իսկ փոխոստիկանապետ (ոստիկանապետի օգնական), 1915 Յուլիսի 30ից ոստիկանապետի պաշտօնատար Հ. Խանճեանը նախկին արմենական էր՝ Սահմանադիր-Ռամկավար Կուսակցութեան անդամ: Այդ կուսակցութեան անդամ էր Արտակ Դարբինեանը, որը յետագայում վարում է Նահանգային Վարչութեան դիւնապետի պաշտօնը: Դատախազ Հ. Գալիկեանը ՄԴՀԿուսակցութեան անդամ էր: Արամը այդ նոյն սկզբունքը կիրառում է նաև, երբ 1917ի վերջից հանդիսանում է Երեւանի Հայոց Ազգային Խորհրդի ղեկավարը, իսկ 1918 Յուլիսի 24ից՝ Հայաստանի Հանրապետութեան առաջին Ներքին Գործերի նախարարը: Նա խնդիրներին մօտենում էր ոչ թէ որպէս քաղաքական, այլ պետական գործիչ:

Վանի նահանգապետութեան գոյութիւնը եւ աստիճանաբար առօրեայ գործունէութեան կարգաւորումը «անհանգստացնում» է ոռուսական կառավարութեանը: Նրանց համար ցանկալի չէր, որ բացառապէս հայերից կազմուած այդ, թէկուզ ոռուսական հրամանատարութեանը ենթակայ նահանգը, դառնար ապագայ ինքնավար Հայաստանի հիմքը: Բացի այդ, կառավարութիւնը խորապէս «անհանգստացած» էր Կովկասեան բանակի յաղթանակներով եւ դա այն դէպում, երբ ոռուսական բանակը ծանր մարտեր էր մղում ոռուս-աւստրիական ռազմաճակատում<sup>17</sup>: 1915ի Յուլիսի 11ին, առանց որեւէ լուրջ եւ հիմնաւոր ռազմական անհրաժեշտութեան Կովկասեան Դ. բանակի գօրամասերը հապճեզ նահանջում են: Նման հապճեապութիւնը հնարաւորութիւն չի տալիս հայերին կազմակերպել ինքնապաշտպանութիւն: Տարածւում են չափազանցուած լուրեր մեծաթիւ թուրքական գօրքերի յարձակման մասին: Իրականում հակառակորդը նման մեծաթիւ ուժեր չունէր: Թուրքական բանակի գերակշիռ մասը ծանր մարտեր էր մղում Դարդանէլի շրջանում՝ անգլ-ֆրանսիական ուժերի դէմ, ուստի թուրքերը չէին կարող այդ ժամանակ մեծաթիւ զինուորներ ուղարկել ոռուս-թուրքական ռազմաճակատ: Կարելի է ենթադրել, որ կեղծ նահանջը նպատակ ունէր:

1. Վերացնել հայկական ինքնավար իշխանութիւնը,
2. Դրդել հակառակորդին՝ խորանալ իր կողմից աւերուած շրջաններ եւ ապա հակայարձակումով շրջապատել եւ ոչնչացնել թուրքերին<sup>18</sup>:

Մեր այս ենթադրութիւնը հաստատում է համապատասխան փաստերով՝ Օգոստոսի 1ին Վանը վերագրաւելուց յետոյ ոռուսներն այլեւս չվերականգնեցին հայկական իշխանութիւնը:

Յուլիսի 23ին գեներալ Ն. Ն. Բարաթովի ռազմարշաւային կորպուսն անցաւ յարձակման: Յուլիսի 25ին ոռուսները գրաւեցին Կիլչ-Գեադուէ լեռնանցքը, իսմար եւ Դութախ գիւղերը: Նշուած գործողութեան ընթացքում փակուեց

թուրքական զօրքերի նահանջի ճանապարհը Եփրատ գետի աջ ափով։ Սակայն, Կովկասեան Դ. Բանակի ուշացած յարձակումը հնարաւորութիւն չտուեց իրականացնել հակառակորդի ուժերի շրջապատումը<sup>19</sup>։

Հրատարակուող փաստաթղթի հեղինակը՝ Յովհաննէս Գրիգորի Տէր-Մարտիրոսեանն (1867-1954) է՝ Հայ մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչներից։ Նա գիտական հասարակութեանը յայտնի է Ա.-Դօ անուամբ։

Ա.-Դօն Հայ հասարակութեան համար անծանօթ դէմք չէր։ Նրա ուսումնասիրութիւնները վերաբերում են Հայ ազատագրական շարժումներին, Արեւմտեան Հայաստանի ընկերային-տնտեսական կացութեանը, վարչական կառուցուածքին, բնակավայրերի եւ բնակչութեան վիճակագրութեանը։ Սակայն խորհրդային տարիներին, ժամանակի նշանաւոր մտաւորականի գործունէութիւնը հիմնականում մնացել է ստուերում։

Ա.-Դօն ծնուել է Նոր-Բայալգէտում (այժմ՝ ք. Գաւառ՝ ՀՀ Գեղարքունիքի Մարզ)։ Սկզբնական կրթութիւնը ստանում է ծննդավայրում, որտեղ սովորում է միքանի տարի։ 1881 Սեպտեմբերի 4ին Ա.-Դօն տեղափոխում է Երեւան՝ աւագ եղբօր մօտ, աշխատելու նրա խանութում։ 1888 Յունուարի 23ին Մշակթերթում լրյա է տեսնում Ա.-Դոյի առաջին յօդուածը։

Աշխատելուն գուգընթաց, 1889-1891ին նա սովորում է Երեւանի Թեմական Դպրոցում։ 1905 Սեպտեմբերին ընդունում է Խարկովի Համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտը որպէս ազատ ունկնդիր, սակայն Ռուսական Յեղափոխութիւնը (1905-1907) եւ ուսանողական յուղումները հնարաւորութիւն չեն տալիս աւարտել ուսումը եւ Ա.-Դօն ստիպուած է լինում վերադառնալ Երեւան։

1903ին տպագրում է Ա.-Դոյի, ներկայիս գիտական հասարակայնութեանը համեմատաբար սակաւ յայտնի Մակեդոնիա գրքոյկը<sup>20</sup>, որտեղ նա կատարում է հետաքրքիր հետեւութիւն, թէ՝ օսմաննեան տիրապետութեան ներքոյ հեծեծող Մակեդոնիայի համար հակաթուրքական երրորդների ազդակ է հանդիսանում օսմաննեան կառավարութեան կողմից 1895 Մայիսի 11ին ընդունուած եւ Հայկական Նահանգներում նախատեսուող Մայիսեան Բարենորոգումների Մրագիրը<sup>21</sup>։

Ա.-Դոյի գրչին է պատկանում նաև մէկ այլ գրքոյկ, որը ներկայացնում է 1890ականների կոտորածների հետեւանքով ծննդավայրը լքած Վանի Վիլայէթի Արճէլ գաւառի Ախարան գիւղի բնակիչ Մուրագին։ Գիտնականը հետեւեալ սահմանումն է տուել գաղթականին։ «...զաղթականը նա է, որ զորկ գլուխը դնելու տեղից մի կտոր հացը կուլ է տալիս արցունքով բրջած, որի բերանից կ'լեր Ախ՝ Վարան... Ախ՝ Երկիր... իրազմակէտերը հեղինակինն են - Ռ.Ա.]»<sup>22</sup>։

1905ի Ռուսական Առաջին Յեղափոխութիւնը հնարաւորութիւն է տալիս ուռւս, ինչպէս նաև Հայ առաջադէմ հասարակայնութեանը տպագրել մինչ այդ գրաքննութեան կողմից արգելուող մի շարք գրքեր։ Ա.-Դօն օգտագործում է ընձեռնած հնարաւորութիւնը եւ թղթին է յանձնում Միքայէլ Նալբանդեանին նուիրուած գրքոյկը<sup>23</sup>։

1906ից մինչեւ 1908 Ա.-Դօն ուսումնասիրում է ցարական կառավարութեան սադրանքով հրահրուած հայ-թաթարական (աղրբեջանական) ընդհարումները (1905-1906)։ Նա 1905 Յուլիսին եղել էր Շարուրի եւ Նախիջեւանի գաւառներում, 1906 Հոկտեմբերին՝ Գանձակի նահանգում։ Արդիւնքում ստեղծում է

մի աշխատութիւն, ուր փաստերի եւ ժամանակի մամուլի հիման վրայ ներկայացնում է այդ տարիների ողբերգական իրադարձութիւնները<sup>24</sup>:

1908 Մեպտեմբերին մեկնում է Ս. Պետերբուրգ եւ ուսանում Հոգէ-նեարդարանական ինստիտուտում: 1909ի սկզբին գալիս է Երեւան եւ որոշում է իրագործել վաղեմի երազանքը՝ ուղեւորութիւն կատարել Արեւմտեան Հայաստան: Նոյն թուականի Յուլիսի 22ին հատում է ոռու-թուրքական սահմանը եւ անցնում է Ալաշկերտի հովտում գտնուող Բայազէտ քաղաքը: Ուղեւորութիւնը տեսում է երկու ամիս եւ նա հասցնում է լինել Վանում, Մուշում, Էրզրումում (Կարին) եւ այլ վայրերում: Ուսումնասիրութիւնների արդիւնքները գիտնականը յանձնում է տպագրութեան<sup>25</sup>:

1909ին Ա-Դօն հեղինակում է Ազատագրական Շարժումը մուսաստանում<sup>26</sup> աշխատութիւնը, որի համար ցարական դատարանը նրան դատապարտում է մէկ տարուայ բանտարկութեան, որը կրում է Ներքին Ախտայի (այժմ՝ Ք-Հրազդան, ՀՀ Կոտայքի Մարզ) բանտում:

1914ին իշխանութիւնները թոյլատրում են Ա-Դոյին հետազօտական աշխատանքներ կատարել Երեւանի Գիմնազիայի արխիւում եւ նիւթեր հաւաքել Խաչոտուր Արովեանի գործունէութեան վերջին տարիների վերաբերեալ (1843-1848): Ուսումնասիրութեան արդիւնքում նա պատրաստում է հետազօտութիւն, որի մի մասը տպագրուում է Բաքուում հրատարակուող Գործ ամսագրի 1914, թիւ V-VI եւ VII-VIII համարներում: Գիտնականը կարողանում է ճշգել Արովեանի ծննդեան տարեթիւը՝ 1809: Յաւօք, Առաջին Համաշխարհային Պատերազմի պատճառով յետազայ հրատարակութիւնը դադարեցւում է:

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին Ա-Դօն մասնակցում է Հայ գաղթականութեան խնդիրներով զբաղուող կազմակերպութիւնների աշխատանքներին: 1915 Յունիսի 14ից մինչեւ Յուլիսի 24ը, Ա-Դօն գտնում է Վանում եւ լրջակայ գաւառներում: Նա եւ իր ընկերներն ականատես են լինում զանգուածային աւերածութիւնների եւ սպանութիւնների հետեւանքներին, որոնք իրականացրել էին թուրք եւ քուրդ ջարդարարները: Գիտնականն առօրեայ աշխատանքի հետ միասին սկսում է կատարել ուսումնասիրութիւններ, տեղեկութիւններ հաւաքել այս կամ այն բնակավայրի, բնակչութեան կազմի, տեղի ունեցած իրադարձութիւնների մասին: Ինչպէս վկայում է Ժամանակակիցը: «Այս [ Վանի նահանգի հայութեան կոտորածը եւ ինքնապաշտպանական մարտերի] ամբողջ անցքի մանրամասն նկարագիրը գրի էր առնում հրատարակելու Ա-Դօն. ուստի եւ անընդունակ եմ համարում հատուկոր տեղեկութիւններ տալ»<sup>27</sup>: Այս փաստը վկայում է Ա-Դոյի Հայ հասարակութեան մէջ ունեցած գիտական եւ հասարակական հեղինակութեան մասին:

1919ից մինչեւ 1949 Ա-Դօն աշխատում է Հայաստանի Սպառողական Ընկերութիւնների Միութիւնում (Հայկօօպ):

Մտորեւ ներկայացուող փաստաթուղթը տպագրուում է առաջին անգամ, ուղղագրական եւ կէտադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով: Փաստաթղթի վերնագիրը հեղինակինն է: Բնագիրը պահուում է Հայաստանի Պատմութեան թանգարանի արխիւում: Փաստաթղթի պատճէնը մեզ է տրամադրել Ա-Դոյի դուստրը՝ տիկին Աղոյիան, որի համար յայտնում ենք մեր չնորհակալութիւնը:

[1916թ.]

[Երեւան]

Ծանր ժամանակաշրջան էր.... (բազմակտերը փաստաբղինն են – Ռ. Ա.)

Առաջին համաշխարհային պատերազմը իր կործանիչ հողմապոյտի մէջ քաշելով երկրագնդի խոշոր և նրանց յարող մանր պետութիւններին, բեւակոխել էր երկրորդ տարին և զանգուածային բախումները ամէն տեղ շարունակում էին խելատ բափով։ Խելակորոյս այդ պատերազմի մէջ նետուել էր նաև թիրքականը՝ ծեռոց նետելով այն Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որի ծեռից նա կրել էր մահացու հարուածներ XIX դարի ընթացքում տեղի ունեցած մի շարք պատերազմներում<sup>28</sup>։

Սեւ Ծովի ափերից սկսած մինչեւ պարսկա-թիրքական սահմանի ամրող տեսողութեամբ ուսական և թիրքական բանակները բախուելով եւ յետ ու առաջ շարժուելով, հարուածը մեծապէս հասել էր սահմանամերձ թիրքահայ ժողովրդին, որը տեղահանուած եւ տարագիր ուղիներ բռնած դեգերում էր բնութեան դաժան մէկ ճմռան սառնամանիքներում, մէկ ամառային տասկերում՝ կրելով եւ քաղց եւ ծարաւ եւ վարակիչ ախտեր ու մահ։

Այսպէս էր սահմանամերձ թիրքահայութեան դրութիւնը, սակայն աւելի սոսկայի դրութիւն վիճակուած էր սահմաններից հեռու, խորքերում գտնուող թիրքահայութեան համար։ Ժեօն Թուրքիայի<sup>29</sup> ոճրագործ-քանդիտային կառավարութիւնը Արդու Համիլից<sup>30</sup> ժառանգութիւն ստանալով հայացինց քառարականութիւնը՝ մէկտեղ անցաւ այդ դիաւային ծրագիրն ի կատար ածելու։

Համաձայն Պոլսից ստացուած գաղտնի հրամանների ամէն տեղ հրապարակ քաշուեցին վայրենի յորդանները դեկավարութեամբ այն ոճրագործ ցեղապետերի, որոնք մինչեւ այդ որպէս դատուածները<sup>31</sup>, պատերազմի պատրուակի տակ ազատ էին արձակուել։ Անսպասելի, աշունը հայ մարդ[իկ] 15 տարեկանից վեր քշում էին բանտերը և զօրանցները, [նրանց] կապիկուած էին բոկերով 15-20-25 հոգիներ, քշում էին շենքերից հեռու հեղեղատներում, գետաբերաններում ու ձորերի մէջ հանազարկերով գնդակահարում եւ ապա տուխահար անելով հեռանում էին, նորանոր շարքեր բերելու։ Գեղեցիկ կանանց և դեռասի աղջիկներին առեւանգում էին ու տանում։ Այդ զագիր գործողութիւններից յետոյ մնացեալ մասն զանգուածներով քշում էին դէպի Միջազգետրի աւագուտները, որոնցից շատերը անկարող լինելով տանել գերեվարութեան գրկամքները, ընկնում-մեռնում էին զարդարելով իրենց անցած ճանապարհներն իրենց դիակներով։ Խսկ կենդանի մնացած շատ փորք տղաներ ու աղջիկներ վաճառքի էին հանում Դեր-Զօրի<sup>32</sup> եւ այլ կենտրոնների շուկաներում, որոնք զնում ու տարում էին խլանի հետեւողների թիր բազմացնելու համար<sup>33</sup>։ Անպակաս էին նաև դէպերը, երբ մարդիկ, կին, երեխաներ հարիւրներով լցնում էին տների ու գռմերի մէջ ու կենդանի բոցերի մէջ խորովում։

Հայ ժողովրդի դարաւոր պատմութեան այս գերագոյն Սեւ ֆոնի վրայ երեք առկայծող կտսեր, որոնք միսիրարիչ ցոլքեր նետեցին համաժողովրդական վշտի ու մտորումների այդ պահին, համբխացան Վանի երկու քաղաքանասերի<sup>34</sup> ու Շատախի<sup>35</sup> ամրող մէկ ամիս տեսող պաշարումը եւ հայ

ժողովրդի հերոսական դիմադրութիւնն ու պայքարը, որը և յանգեց թիրք պետութեան անօթարեր պարտութեանը ու փախուստին:

Վանի երկու քաղաքամասերը և Շատախը յաղբանակել էին, մի քանի տասնեակ հազարաւոր ժողովուրդ փրկուել էր բնաջնջումից և գոյութեան իրաւունքն էր շահել իր օրիասական ընդդումով: Եւ ահա դեպի ազատագրուած Վանը շտապում էին շատերը, վշտահար ու սոսկալի հաղորդումներն այդ ակտով սփոփանք գոնելու համար [sic!]:

Ռուսական քանակը առաջապահ ունենալով հայ կամաւորական գնդերը քառականին առաջ էր գնացել Երզրումի, Վանի և Բաշկալի ուղղութիւններով ու թիրքական քանակը պարտութիւն կրելով ու նահանջելով, սրբում էր ճանապարհին որեւէ կերպ գոյութիւնը պահած հայ ժողովրդի աննշան թեկորները:

Պատմական օրեր էին. Վանում տեղական ուժերից կազմուել էր ժամանակաւոր հայ կառավարութիւն և շրջանի ղեկավարութիւնը յանձնարարուած էր նրան<sup>36</sup>:

Ռուսական քանակը հայ կամաւորական գնդերով հանդերձ գործում էր լի հարաւային ճակատում<sup>37</sup>:

Վանի ազատագրումը առիր հանդիսացաւ երկրորդ անգամ այցելել խոշոր անցքերի այդ վայրը: Ինձ թելադրում էին երկու հանգամանք՝ նախ տեսնել վեց տարի առաջ այցելած Վանը ներկայ վիճակում, երկրորդ՝ նօտիկից ծանօթանալ և գրի առնել վերջին իրադարձութիւնները:

[1915] Մայիսի 14ին մեկնեցի Երեւանից և 17ին հասայ Վան: Քաղաքը մեծ մասամբ աւերուած է ու հրդեհուած, մի քանի հայկական քաղաքամասեր միայն կանգուն են մնացել: Այդ քաղաքի կենտրոնական մասն էր, որ և դառնում էր ներկայ կեանքը: Նոյն պատկերը կրում էր նաև Վանի երկրորդ կես մասը, իին քաղաքը<sup>38</sup>: ատամնաւոր պարիսպներով շրջապատուած, որը ներկայում միանգամայն ամայի էր:

Ես շրջեցի երկու քաղաքամասերի բոլոր կրակակետերը, որոնք ցերեկ-ները գնդակումների հետեւանքով մնապես վնասում էին, իսկ գիշերները նորից նորոգում էին ու վերակառուցում<sup>39</sup> և այդ՝ անընդհատ, ամրոց մէկ ամիս: Ես այցելեցի հերոսական դիմադրութեանը մասնակցողներից աշրի ընկնողներին, այցելեցի հերոսական ակտեր կատարած կանանց, անգամ 10-12 տարեկան տղաներին, որոնք թերոք քարձունքից Քաղաքամէջ նետուած ուներին վրայ հասնելով ծգում-հանում էին պատրույգները, ոչ միայն նրանց անվնաս դարձնելով, այլև նրանց մէջ եղած վասողը փամփուշտների համար գործադրելով:

Ապա հետաքրքրուեցի ժամանակաւոր հայ կառավարութեան ֆունկցիաների ու կառավարման սխալների խնդիրներով: Եւ հանդիպում ունեցայ այդ կառավարութեան ղեկավար անձերի հետ: Սկսուել էր մեծ քափով շինարար աշխատանք բոլոր գծերով՝ պատկերը միշտարական էր:

Աւարտելով Վանում կատարելիք աշխատանք, առիր հանդիսացաւ մեկներու ճակատ, այն ճակատը, որ գործում էին հայ կամաւորական գնդերը: Ճակատ էին մեկնում կամաւորական գնդերի հետ կապ ունեցող պաշտօնական անձեր՝ 7-8 հոգուց քաղկացած, որոնց բում նաև գրականագետ-ըննադիմ Նիկողայոս Ալքանեանը<sup>40</sup>: Եւ ես միացայ այդ խմբին որպէս դիտող: Ինձ տրամադրուեց մէկ ծի եւ Յունիսի 28ին մեկնեցի ճակատ:

Մենք կտրեցինք Վան-Տուպի, Հայոց Ձորի գաւառների որոշ տարածություններ, կտրեցինք նաև Գետաշ գաւառի լճափնեայ լայնութիւնը, մի ճանապարհ, որի վրայ եւ փոքր ինչ ենոու հետեւեալ պատմական վայրերը.

- Պատմական Շամիրամի<sup>41</sup> ջրով ոռոգուող բուսազարդ Արտամէտը, որը հոչակուած է ծառապտուղներով եւ առանձնապէս խնձորներով:
- Ճանապարհից դեպի հարաւ գտնուում է Զաղար Անշանի [Զաղար Ս. Աստածածին] վանքը, որտեղ պահուում է V դարի քաղցրախօս Եղիշէի գերեզմանը:
- Արտու լեռան հիմսային փեշերի ու Վանի լճի հարաւային ափերի վրայ մեկ բուսազարդ հովուում փոքրուած է Ոստան աւանը՝ նախկին Ռշտունեաց իշխանի կալուածքն ու ամրոցը, որում ապրում էին քիրդեր եւ որպէս Գետաշի վարչական կենտրոն երկու ամիս առաջ նստում է[ո] քիրդական կայսմականը, իսկ ներկայում վարում էր գաւառը հայ կառավարութեան գաւառապետը<sup>42</sup>:
- Աղքանարի կղզին ու նրա դրսի տունը՝ բուսազարդ Ախավանքը<sup>43</sup>, նախկին Գագիկ Արձրունու<sup>44</sup> ապարանը ու ամրոցը, որում գտնուում էր շրջակայ մի շարք գաւառների հոգեւոր կենտրոնը:
- Ախավանքից ոչ ենոու, դեպի հարաւ-արևմտութք գտնուում է Նարեկի վանքը, որի նստելի խորանում պահպանուում է XI դարի քանաստեղծ ու մատենագիր Գրիգոր Նարեկացու գերեզմանը:

Առաջին գիշերն անցկացնելով Ախավանքում, յաջորդ առաւտեան՝ Յունիսի 29ի ելանը Ախավանքից եւ երկու ժամի շափ փոշոտ եկեւէջներ կտրելով ուր դիմու լեռնոտ, թեկրեկուն եւ անտառապատ Կարճկանի գաւառը՝ գեղեցիկ քնորհին, բայց միանգամայն անայցած:

Ճանապարհը գնալով դառնուում է բնաջնջման ցուցադրական: Ոստանում կային Շատախի դիմադրութեան շնորհի փրկուած աւելի քան 4000 ժողովուրդ, կային փրկուած ժողովուրդ նաև Ախավանքում, բայց շատ քիչ բուռ։ Սակայն Ախավանքից սկսած խօսակցութիւնները դառնուում էին քարրարութիւնների ու դիակույտերի շուրջը: Ախավանքում պատմեցին, որ մեկ օր առաջ ալիքները լճի ափ էին նստել 26 տղամարդկանց դիակների:

Իսկ Ախավանքից դեպի Կարճկան ճանապարհներին հանդիպում ենք հետեւեալ տեսարաններին:

Անգեալոր գիտի տակով ձգուում էր մի ճանապարհ՝ ճանապարհի ընթացքով հոսուում է փոքրիկ առուակ, այդ առուակի ափին ընկած է կանացի դիակ՝ պառկած մէջքի վրայ, ոտները դարձած դեպի արեւելք եւ ձեռքները կործի վրայ, ըստ երեսութիւն անցորդ մեկ հայ մարդ այդ անշունչ դիակին տուել է քրիստոնէական ծիսակատարութեանը հանաձայն դիրք:

Ս. Յակոբի լեռնանցքի արեւմտեան լանջին նորից ճանապարհի կողքին՝ մեկ կնոջ դիակ՝ պառկած մէջքի վրայ, ոտները կուչ արած, թեւերը տարածուած, մազերը խորի, դէմքը այլակերպուած, մտածում ենք, թէ որքան տանջուել է այդ կինը մինչեւ անզգայանալը:

Եերուդ գիտի դիմաց մեկ հովտի մէջ գտնուում է կանգնած վիճակում մեկ ջրադաց, իսկ դրա կողքին աւերակ խանուր եւ այդ աւերակի յատակին կողքի փոքրուած են երկու դիակներ՝ մեկը կնոջ դիակ է՝ փետացած ձեռքի ցուցամատը դեպի արեւմտութք դարձրած, կարծէր ցուցամատը ասում է ծեզ, որ ոճագործը դեպի այն կողմն է փախել, իսկ միւսը մեկ ամենի շան դիակ է.

մարդը և շոնը հաւասարաշափ անուշադրութեան մատնուած, սակայն որպէս արժեք գերադասելի է շան դիակը, չէ՞ որ նրա մորքը կարող է յդիացած մէկի ճարպու մարմինը տարացնել:

Երբ մենք անցնում էինք Կարմկանի գիտերի կողքով, մէկ ծանր զգացմանը խեղորում էր մեր կոկորդը՝ ամայութիւն ու ամայութիւն, ոչ միայն մարդկային շունչ, ոչ միայն որեւէ արարած չէր նկատուում, այլ նոյնիսկ ողի մէջ բռչուններ անգամ չէին երեւում, մի սոսկալի լուսքիւն, խորունկ լուսքիւն իջել էր այդ բնութեան վրայ: Եւ մէկեն դատարկ գիտի ծայրից գազանային ոռնոց բարձրանալով դուրս էին պրօճնում ամենի շներ և սարսափած փախչում դէպի լինենքը և անտառները: Դրանք տուեալ գիտի ընտանի շներն էին, որոնք կատարուած ոճիրներին ու սոսկուններին ենքարկուած հայ ժողովրդի երկինք հասնող լաց ու կոծին, աղաղակներին ականատես կրելով [լինելով – Ռ.Ա.], իրենք եւս վայրենացել էին և բաղցի մատնուած իջնում էին գիտերը ուսեսաւ որոնելու համար: Հայկական սոսկունները ազդել էին շների վրայ անգամ, բայց չէին ազդել թիւրը ոճրագործ պետական գազանների վրայ:

Մեր տեսած կնոջ դիակի կողքին ընկած շունը, անշուշտ ցած իջած, կնոջ դիակը տեսած և վրայ պրծած մոմենտին անշուշտ պատահել էին զինուած մարդիկ և զնդակահարել այդ կենդանուն:

Այս տպաւորութիւնների մտորումների տակ շափշփում էինք Կարմկանի բեկրեկուն եկեւէջները, բողնելով ետեններս Գեաւաշի վերջին գիտը՝ Նանկանցը հրդեհուած:

Իջնում ենք մէկ ծովախորշ այդտեղ ընկած է Զեյփա գիտը և շարունակելով ճանապարհը բարձրանում ենք մէկ դիրքաւոր հարթակ այստեղ առաջին անգամ հեռուից լուսում են բնդանօրային որոտներ, տեղի ունի [են ունենում – Ռ.Ա.] ուժեղ բախում, բարձրանում են ծխի սիմեր, հրդեհում են գիտերը:

Նորից եկեւէջներ և առաջներս բացում է մէկ ընդարձակ խոտակտ հովիտ՝ այդ Եղեգիսի դաշտուն է, որի հարթակներում գտնուում են Գոնս, Օղուանից բազմանարդ հայարնակ գիտերը, իհարկէ բոլորն էլ լրուած ու կողապուած: Հովտի մէջ խփուած է մէկ վրան, որի տակ պատկած են մի քանի վիրաւոր զինուորներ, իսկ վրանի կողքին բոցավառում է մէկ ուժեղ խարոյկ, օրոյ նրնում է՝ որոշում ենք այդտեղ էլ գիշերել:

Բայց աշքերիս բուն չի մօտենում, չնայած սաստիկ յոգնածութեանս: Երկու օրերի տպաւորութիւնը՝ տեսած դիակները, գիտերի ամայութիւնները, անոնք մարդկային [sic!] եւ կենդանային շնչերի բացակայութիւնը և ընտանի շների վայրենացումը և առանձնապէս շրջապատի լուսքիւնը, ամայութիւնը գալիս անցնում են յիշողութեանս դաշտով և ինձ տիրում է պատրաճ, երազանք և անտրիմ:

Յունիսի 306 է, առաւտեան ժամը 6ը, բողնում ենք Եղեգիսի խոտակտ հովիտը և վիրաւոր զինուորներին պատսպարող վրանը և շարունակում ենք մեր ճանապարհը: Կորում ենք բաւական տարածութիւն, կատարում ենք մի շարք եկեւէջներ և ուր ենք դնում խոտակտ մի տափարակ, որա զարդն է կազմում մէկ ժայռից բխող սառնորակ աղբիրը: Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք հայ կամաւորական մասերին:

Այստեղ է Անդրանիկն <sup>45</sup> իր գնդով: Նրա տրամադրութիւնը բարձր է, դէմքը առոյց: Խօսում է պարզ, անպաճոյն շեշտով: Մէկ օր առաջ բախուել է թշնամուն և խել է 4 ընդամօր:

Այստեղ է մէկ տարիքատը՝ Հայկական հարցին նույրուած անձնաւորութիւն՝ նրան անուանում են Կայծակ Առաքել <sup>46</sup>: Դա պատմում է իր տեսած հետևեալ տեսարանը:

Եղեգիսից դէսի արեւմուտը գտնում է Կենդրանց հայ գիտը, 32 տնից բաղկացած, ծառազարդ, ծառապտութերով հարուստ գիտ, գիտի մէջ՝ ջրադացի մօտ, մէկ ծառի տակ տեսել է 25 կանանց և երեխաների գնդակահարուած ու մորուսուած դիակներ:

Բացի այդ, նոյն Կայծակ Առաքելը [պատմում է, որ], 25 տուն ունեցող Առանց գիտուն, իհարկէ բոլոր գիտերն էլ դատարկ ու աներ, տեսել է 5 և 7 տարեկան երեխաներ, որոնցից 5 տարեկանը արդէն մեռած, իսկ 7 տարեկանը թէնի կենդանի, բայց բոլորովին հիւծուած, դրան վերցնում է Կայծակ Առաքելը, ինամուն է և ուտեցնում, բայց փրկել նրա կեանքը չի կարողանում, երեր օրից մնունում է այդ հիւծուած երեխան:

Ծարունակում ենք մեր ճանապարհը, շուտով հասնում ենք Վանիկ հայ գիտին: Այդ գիտի տակ, արտերի մէջ, խփուած է մէկ վրան՝ այդտեղ են Վարդանը <sup>47</sup>, Դրօն <sup>48</sup>, Ջեռին <sup>49</sup>, Խեցօն <sup>50</sup>, Սիշէն <sup>51</sup> իրենց մասերով [գնդերով – Ռ.Ա.]:

Յերեկուայ ժամը 12ին երանան է ստացում և բոլոր օրամասերը շարժում են դէսի հիւսիս-արեւմուտը: ճանապարհը ծգում է լճափերով և երկար պտոյտներ գործելոց յետոյ հասնում ենք Խարձիք հայկական գիտին և կանգ ենք առնում նրա առաջ փուուած դաշտում: ճանապարհին, նախքան տեղ հասնելը, մէկ փոսի մեջ կուտակուած են 30ի շափ թշնամու դիակներ և այդտեղից ծգուող դաշտի վրայ տեղ-տեղ պատահում են դարձեալ թշնամու կենս դիակներ: Այս դաշտում երկու օր առաջ տեղի է ունեցել ընդհարում և թիրքական օքրերը դիմել են փախուստի:

Այստեղ հետախոյզմերը թերում են թիրքական երեր գերիներ՝ խարի գոյսի հագուստով, դրանք զինուորներ են: Դրանցից մէկը բարձրահասակ, կոպակ դէմքով, բայց դաժան հայեացըն է, հարցերին չի պատասխանում և յանառ լուրիւն է պահում: Սիս երկուար ընկճուած են, գգում են գերութեան վիճակը և պատմում են Թիրլիսում կատարուած ջարդերի ու տեղահանութեան մասին:

Յովիսի մէկն է, նորից գօրքերի տեղաշարժ, նորից պտոյտներ եւ եկեւչներ, որոնք յատուկ են Կարճկանի տեղանքին: Ժամը 9 եւ կեսին հասնում ենք Խնձորկէն գիտին, բայց մինչեւ Պաշուանց հայ գիտից սկսած ճանապարհին բափուած են փախուստի մատնուած թիրքական բանակի իրերը՝ վրաններ, շարժական մահճակալներ, արոռներ, նաւով լի թիրեղատուփեր, դեղերով լի արկեր եւ այլ իրեր:

Խնձորկէնը գեղեցիկ ծովախորշի ափին բազմած գիտ է, դիմացը՝ տարածուած պտղատու պարտէզներ, տները լաւ, դալրոցի շենք եւ այլն, բայց ամայի: Մտնում ենք տները՝ կողոպտուած են, յատակները փորփրած, խուզարկել են բոլոր ծակուծուկերը և տարել են ամէն ինչ: Մէկ տանը կից նկատում ենք ծածկուած լուս, մօւենում ենք, բացում դուռը՝ ներսում մէկ գեղեցիկ

երինջ մեզ տեսնելով վախի շարժումներ է կատարում և եթ մենք կանգնած չլինենք դրան շեմքի վրայ, անշուշտ նա դուրս կը բռչէր, վախուստի դիմելով:

Այդ երինջը, որը մի գեղեցկութիւն էր, այնպիսի գեղեցկութիւն, որ լաւ նկարիչը նրանից կը կերտէր ուշագրա մի կտու, հայեացը բնւեռել էր մեզ վրայ ու սպասում էր: Այդ հայեացը բախանձող էր, ներգործող ու հնայոդ նա արտայայտում էր սարսափ և կարեկցութիւն և աղերսանք, միայն բանական մարդը չէ, որ աղետը դրոշնած իր ճակատին կարեկցութիւն է աղերսում ծեզանից և աղերսում է ոչ թէ բառերով կամ խօսրով, այլ իր տեսքով՝ արտայայտութեամբ: Նման պայմաններում մարդու հետ ապրող կենդանին աննա չի մնում մասսայական աղետը տեսնելու[ց], զգալու[ց] և արտայայտելու[ց]: Եւ այդ մոնենութիւն աւերակ ու ամայացած գիտում միայնակ մնացած այդ կենդանու գեղեցիկ աշքերի ու հայեացի մեջ եւ կարդացի եւ սարսափ եւ կարեկցութիւն եւ աղերսանք:

Երկար դիտելուց յետոյ դուրս նորից ծածկեցինք ամայի գիտում միակ կենդանի մնացած այդ կենդանու վրայ և հեռացանք տանելով յիշողութեանս մեջ դրոշնուած այդ կենդանու եւ սարսափ եւ կարեկցութիւն եւ աղերսանք արտայայտող հայեացը, միաժամանակ տանելով խոճիս վրայ նստած մի անասելի ծանրութիւն, այն, որ տեսնելով այդ կարեկցութիւնն ու աղերսանքը, անկարող ես վերացնել, անգամ մեղնացնել այն:

Վանի լիի հարաւ-արեւմտեան ծայրի ուղղութեամբ ծգում է նեղ ու ժայռու մեկ ձոր: Այդ ձորի միջով գալիս բափում է լիի մեջ մեկ գետ՝ դա կոչում է Թուխ: Այդ ձորը, միաժամանակ Թուխ գետը հանդիսանում են Վանի և Քիրլիսի վիլայեթների սահմանը: Բացի այդ, լիից ոչ հեռու, Թուխ գետի ծախ ափին գտնում է Թուխ գիտը մեկ փոքրիկ հարքակի վրայ գետեղուած:

Ժամի 26 է, Անդրանիկն իր զօրամասով եւ 2 լեռնային բնդանօբներով կանգ է առել Թուխ գետի ձորի արեւելեան մեկ բարձրաւանդակի վրայ, որտեղից երեսում է Թուխ գիտը և լիի արեւմտեան ափերի ուղղութեամբ ընկած Ուրբափ գիտը և դրա ետեսում երկարուկ ծգուած բլուրների շարքը: Թշնամին բռնած ունի Ուրբափը և բլուրների շարքը:

Անդրանիկի մօտ ենք մենք՝ Վանից նկողներս: Որոշում ենք իջնել ձորը և անցնել գետի միւս ափը և այցելել Թուխ գիտը:

Իջնում ենք ձորը, կոխում ենք գետը ու անցնում: Գետը մեծ չէ, բայց փոքր ինչ փոռուած է, ծանծաղուտ և քարուտ: Գետի այն լայնութեան այն ընթացքի մեջ, որով մենք անցանք, բարերին և ջրարույսերին դէմ առած են համբեցի 7 տղամարդկանց միանգամայն մերկ դիակներ, որոնք ջրի հոսանքից ողղուած ներկայացնում էին ծինի կատարեալ սպիտակութիւն: Նրանք Թուխ գիտի հայ տղամարդկանց դիակներն էին: Անդրան էին մի փոքր տարածութեան վրայ իմ տեսածը: Որքան էին մեր անցած տեղից վեր և վար հոսանքներում ընկածները՝ աստուած գիտել, բիորբական եաբաղանք զարկել ու անցել եր անխնայ:

Թողինք այդ տեսարանը եւ բարձրացանք այն հարքակի վրայ, ուր գետեղուած էր Թուխ գիտը. շնչաւոր էակ չի երեսում, կատարեալ լուսութիւն է, այս ու այնտեղ հարքակի վրայ, տների սուած բափքփուած են տնային իրեր՝ բուրդ, մանածներ, բաղիքներ, անկողիններ, իտ, պանիր և այլն, իսկ հարքակի կենտրոնում կանգնած է մի սայլ՝ նման իրերով բարձուած, որքան որ հնարաւոր է եղել: Որչափ մարդկային աշխատանք է բափուել նրանց վրայ, բա-

Շիքանի ընտանիքներ ու շնչեր ստեղծել են այդ բոլորը և մեկ աւերիչ ձեռք եկել, աւերի է ու գնացել:

Մինչդեռ այս ու այն կողմ էինք] նայում, յանկարծ դիմացի մեկ փոս ընկած դրսից դուրս եկաւ մեկ պառաւ կին, գլուխը բաց, մազերը խոփի, դէմքը ալլայլուած, հագուստը մաշուած ու կեղտոտ. դուրս եկաւ, արտասովոր հայեացը ձգեց այս ու այն կողմը և կարծէք որեւէ մեկին փնտոում էր և երբ մեզ տեսաւ, մեկէն երեսը դարձրեց և շտապ ներս մտաւ: Մենք ծայն տուինք, հայերէն կամչեցինք ետեից՝ մի վախնցիր, արի, կրկնեցինք, բայց գոր, նա շնեց և երէ լսեց էլ, ետ շեկաւ ու անյայտացաւ մրութեան մէջ: Որպիսի՝ աղէտներ էր տեսել ու ապրել նա՝ տղաներ, հարսներ, բոռներ ի՞նչ էին եղել, ո՞ր էին տարուել, թերեւս գնդակահարուել ու խողխողուել էին նրա աշքերի առաջ: Նրա մեկէն յայտնուելը, նրա արտասովոր որոնող հայեացը և մեկէն անյայտանալը ոչ մի կասկած չքողին ինձ մէջ, որ այդ կինը խելագարուել էր՝ անկարող լինելով տանել իր սիրելիների խողխողումները:

Մինչդեռ մեր խօսակցութիւնը դառնում էր այդ բշուառ էակի անձնաւութիւնան շուրջը, մեր ականջին հասան մեր հետախոյզների գգուշացումը բշնամու մօտիկութեան մասին եւ [մենք] շտապ բողինք ամայի գիւղը, իջանք ցածր ու անցանք եւ բռնեցինք վերելքը: Երկրորդ անգամ ես համբարեցի գետում տեսած 7 մերկ սպիտակ դիակները:

Օրը մթնում էր, Անդրանիկը հեռադիտակն աշքերին՝ դիտում էր շրջակայքը: Ուրբափի ետեսում ընկած բլուրների շղթայի բարձունքներում նկատեց բշնամու շարժումներ՝ Անդրանիկը երանան տուեց առաջ քաշել մեկ բնդանօքը: Թնդանօթածիզ սպան թնդանօթի թերանք ուղեց դէպի մատնանշած կէտը եւ փականը շարժեց՝ ուումքը սուրաց եւ ընկաւ բլուրների շղթայի այս կողմը եւ հողի սին բարձրացրեց: Թնդանօթը որոտաց երկու անգամ եւս եւ այս անգամ ուսմբերն ընկած բլուրների շղթայի բարձրունքների վրայ: Մի փոքր անց շղթայի ամրող երկարութեամբ սկսուեցին] հրացանային համագարկեր: Այս տեսեց մի քանի բռպէ եւ դադարեց:

Մուքը կոխել էր արդէն, այս մեր շրջագայութեան վերջին կէտն էր. բողինք բարձունքը, իջանք Խնձորէկնին մերձ մեկ խոտաւէտ տեղ ու այստեղ է գիշերեցինք:

Յուիսի 26 է, վերադառնում ենք Վան: ճանապարհը գուում է կամաւրական մասերի հանգիստ առած տեղերով:

Երեկոյեան ժամը 76 է, կանգ ենք առնում Օղու գիւղի մօտիկ մեկ խոտաւէտ հովտում: Այդուեղ գտնուում են՝ ‘Իրոյի եւ Համազասպի’<sup>52</sup> մասերը: Որոշում ենք այդուեղ գիշերել:

Ընկերներս առանձնացել են մասերի դեկավարների հետ խորհրդակցութեան: Ես դանդաղ քայլերով շրջում եմ հանգիստ առած գինուրների շարքերով եւ դիտում նրանց ճակատային կենցաղը. հետաքրքիր է այդ, ամէն տեղ խարոյկներ ու խարոյկներ: Որպէս վանելիք հայրայրում են ամայացած գիտերին]: տների ծածկերը եւ դուռ ու լուսամուտները: Խարոյկների վրայ եփում են թիթեղեայ թէյնիկները, զինուրական փոքրիկ կարսաներով միս, հաճառ եւ այլ ընդողէններ եւ խարոյկների շուրջը աշխոյժ գրոյցներ, երգեր եւ երգեմն էլ պարեր եւ այլն: Եւ մինչդեռ ես շարունակելով [ուսումնասիրել] այդ առանձնայատուկ կենցաղը, փոխում էի քայլերս, ականջիս են հասնում խօսակցութիւն սարից նոր իջած ինչ որ փախստական հայ ընտանիքի մա-

սին: Հետաքրքրում է ինձ այդ խօսակցութիւնը, վիճուում եւ գտնում եմ այդ ընտանիքը, տուած եմ բաշում եւ նատեցնում եմ մեկ զինուորական խարոյէի տուած այնպէս, որ խարոյէի բոցը լուսաւորում է նրանց դժմքերը եւ բացում նրանց հետ իմ սովորական գրոյցը, որից եւ պարզուում է հետեւեալը:

Իմ դիմաց նստած են երեք փրկուած հոգիներ.

1. Բարձրահասակ հայ կնոջ տիպար, 45 տարեկան, անունը Սիմէ

2. Նուազ կազմուածրով աղջիկ՝ 8 տարեկան, անունը Գոգէ

3. Շեկաւուն մազերով երիտասարդ, 20 տարեկան, անունը Գարբիէլ

Բոլորն ել գունաստ եւ հիւծուած դժմքերով՝ գրկանըներ, քա՛ դց, վախ, սարսավմեր ապրած:

Սիմէն եւ Գոգէն մայր ու աղջիկ են, իսկ Գարբիէլը Սիմէի տերոր տղան է:

Ապրիի 6-7ին տեղի է ունեցել Կարճկանի կոտորածը: Սիմէն վերցրած իր աղջիկը փախտել է հեռաւոր Բիկրանց բրդաբնակ գիտը, 3 ամսի չափ կարողացել է իր եւ իր աղջկան կեանքը փրկել եւ լսելով ուստական բանակի գալք բռնել է աղջկայ ծեռքը եւ ցած է իցել իր[են] պատսպարած գիտից եւ բանակին հասնելով անսպասելի պատահել է իր տերոր տղային, որը զօրահաւաքի կապակցութեամբ բանակ է տարուել եւ բանակից փախչելով կարողացել է անխոսափելի կատափնարանից ազատուել:

Այս ընտանիքը Վանիկ գիտի բնակիչ է: Վանիկն ուներ 15 տուն հայ բնակիչ: Սիմէն եւ Գարբիէլը նախ տալիս են այդ 15 տան անունները, որը զի են առնում իմ ծոցատեսրում եւ ապա անուն [առ] անուն տալիս են այդ 15 ընտանիքից երեքի կազմը, որոնք նոյն ընտանիքի երեք բաժանուած եղբայրների ընտանիքներն են:

Այդ երեք եղբայրներն են՝ Յակոբը, Աւետիսը եւ Սահակը: Դրանք այս աշխարհը բողել են բնական նահով նախրան ներկայ դաժան կոտորածները:

Յակոբի ընտանիքը բաղկացած էր հետեւեալ 7 հոգուց.

1. Յակոբի կինը՝ Խերօն՝ 50 տարեկան

2. Սևծ տղան Մանուկը՝ 30 -,-

3. Երկրորդ տղան Դափը՝ 27 -,-

4. Մանուկի կինը՝ Նունուշը՝ 26 -,-

5. -,- տղան՝ Բաղալը՝ 10 -,-

6. -,- աղջիկը՝ Մարօն՝ 8 -,-

7. -,- երկրորդ աղջիկը՝ Կոտ՝ 6 -,-

Աւետիսի ընտանիքը բաղկացած էր հետեւեալ 7 հոգուց.

1. Աւետիսի կինը՝ Սիմ՝ 45 տարեկան

2. -,- ա տղան՝ Մուրադը՝ 22 -,-

3. -,- բ -,- Սիսակը՝ 19 -,-

4. -,- գ -,- Սահակը՝ 16 -,-

5. -,- դ -,- Կրպօն՝ 12 -,-

6. -,- ե -,- Սիմնը՝ 10 -,-

7. -,- աղջիկը՝ Գոգէն՝ 8 -,-

Բացի այս 7ը, երկու աղջիկներն ել ամուսնացել գնացել են: Մուրադը վաղուց պանդիստել էր եւ գտնուում էր Եալբայում<sup>53</sup>, Սիմէն եւ Գոգէն ինձ հետ գրուցող մայր ու աղջիկն են:

Սահակի ընտանիքը բաղկացած էր հետեւեալ 3 հոգուց.

1. Սահակի կինը՝ Անգինը՝ 40 տարեկան
2. „- տղան՝ Գարբիելը՝ 20 տարեկան
3. Գարբիելի կինը՝ Լուսիկը՝ 18 -,,
4. Գարբիելն ինձ հետ զրուցողն էր:

Այս երեք ընտանիքները բաղկացած էին 17 հոգուց: Նրանցից մեկը զբանում էր օտարութեան մէջ՝ մնացեալ 16 հոգուց 3ը ներկաներն էին, իսկ 13ը չկային:

Այդ 13 հոգուց՝

4ը տղամարդ էին, որոնք անշուշտ խողխողութել էին թիւրքական կառավիճարաններում:

4ը կանայք, որոնք կամ առեւանգունել են կամ բոցերի մէջ այրուել ու փոշիացել:

Իսկ 5 մանուկ հասակի տղաներ եւ աղջիկներ, որոնք երեւ զոհ չեն գնացել սուրող յորդաների սմբակների տակ, ապա վաճառուել ու տարուել են իսլամի հետեւողների թիւն անելացնելու համար:

Կառավիճարան, առեւանգում, շուկայ հանուած, իսլամացում, իրենիային բաղնիքներ եւ յորդաների սմբակների տակ փոշիացում, ահա մեկ միլիոն թիւրքահայութեան գողգորան<sup>54</sup>:

Մէկ ամրող ցեղի արինը աճուրդի տրուեց, աճուրդի տրուեց մնձ պետութիւնների կողմից, զազիր-վամպիր դիպլոմատիայի կողմից, բարբարոս թիւրք պետութեան հողային եւ շուկային պատարիկներ կորզելու համար, աճուրդ կատարուեց, մեկ ամրող երկրամաս ամայացաւ:

Ցույն է յիշողութեան մէջ մեկ աղետայի անցք. անցք, որ տեղի ունեցաւ 1912 թուին: Ամերիկեան մեկ խոշոր նաւ, որ կրում էր «Տիտանիկ» անունը, իր մէջ ընդունելով 3000 ուղևորներ՝ դուրս եկաւ ծով, ուղղութիւն վերցնելով դէպի երոպական նաւահանգիստները: Այդ նաւը ճանապարհի կեսին մեկն խորտակուեց, իր հետ տանելով 3000 ուղևորներին<sup>55</sup>:

Այս աղետը իր ժամանակին այնպիսի յուզմունք առաջ բերեց ամրող աշխարհի մամուլի էջերում եւ հասարակական խաւերում, որ շարաբներ շարունակ լոյս էին տեսնում աղետի վերաբերեալ նանրանասնութիւններ եւ յուզում հասարակական միտքը:

Պատահել էր տարերային աղետ, բազմաթիւ մարդիկ զոհ էին գնացել այդ աղետին, մարդկային շարագործ ծնորդ մասնակից չէր այդ աղետին: Բայց եւ այնպէս յուզմունքը մնձ էր եւ իրարանշիր բերան աղաղակում էր գտնել մեղաւորներին եւ գնդակահարել նրանց:

Ծուրքիայի հայութիւնը ոչ միայն հազար, ոչ միայն 3 տասնեակիազար եւ ոչ միայն 3 հարիւր հազար, այլև դրանից էլ 3 անգամ աւելի բազմութիւն զոհ գնաց մարդկային պատմութեան դաժան [այլ] եւս կնիքը դրոշմուած՝ բարբարոս թիւրք պետութեան շարամիտ ոճրագործ, դաւադիր գործողութիւններին:

Ելդզում<sup>56</sup> բազմած ժեօն ծիաղների ոճրագործ կառավարութեան գաղտնի իրամանը տեղեր հասաւ թէ չէ, իրապարակ նետուեցին բարբարոս յորդաները, սկսուեցին տղամարդկանց զանգուածային ջարդեր, կանանց ու թերատի աղջիկների առեւանգումներ ու բռնարարութիւններ, որոշ տեղերում լցրեցին տների ու գոմերի մէջ կին, երեխաներ հարիւրներով եւ դժոխային խալայկների մէջ մոխիր դարձրին եւ ապա կենդանի մնացած հարիւր հազարաւոր կին, աղջիկ, երեխայ բարաւան-բարաւան թշեցին դէպի Միջազգետ-

թի աւագուտները, որի ճանապարհը հանդիսացաւ սովորմների, իիւծուածների և կմախրացածների ընդիանուր զերեզման և միաժամանակ Ներ-Զօրի մի քանի կենտրոնների շուկաները արտասովոր աշխուժութիւն ստացան զերի տարուած հայ մանուկների աճուրդի շնորհի:

Եւ այս բոլորը կատարուեց բացայայտ, այս բոլորը տեսաւ դիանազիտական-դիպլոմատիկական աշխարհը, բայց թէ դիանազիտական աշխարհը կոյր ձեւացաւ, խոլ ձեւացաւ, որովհետեւ այդ Դանքեան դժոխքը հարկատը էր նրան՝ նրան հարկատը էր շուկայ, շահոյք, շահազործում:

Այստեղ վերջակէտ ենք դմում: Անձն ինչ ասուեց:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Այս մասին աւելի մանրամասն տես՝ Ռ. Օ. Սահակեան, *Արևմտահայութեան Ցեղասպանութիւնը Եւ Խմբապահութանական Կողմները 1915 Թուականին*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2005:
- <sup>2</sup> Վարազդատ Տերյան, Գիտական Եւ Հրապարակախոսական Աշխատութիւններ, առաջ. և ծանօթ.՝ Ռ. Օ. Սահակեան, Հրատարակութեան պատրաստեց Ն. Վ. Դերյան, Երեւան, Պատմութեան Խնսութուտ, 2006, էջ 93:
- <sup>3</sup> Հայաստանի Պատմութեան Թանգարանի Նոր Եւ Նորագոյն Բաժնի Պատմութեան Ձննդ, Ա.-Դոյի ֆոնդ, գ. 839/195 (դ), թ. 30:
- <sup>4</sup> Կարո Սասունի, *Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի Ընթացքին (1914-1918)*. Թրքահայոց Գաղրաշարժերը Եւ Անոնց Դերը՝ Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ, Sevan Printing House, Պէյրուր, 1966, էջ 81: Վանի նահանգապետութեան մասին աւելի մանրամասն տես՝ Ա.-Դօ, Մեծ Հայքը Հասպուրականում 1914-1915 Թուականներին, Երեւան, Տպարան «Լոյս», 1917. նաև՝ Ա. Արեւան, «Վանի Նահանգապետութեան Եւ Ռուսական Կովկասեան Բանակի Հրամանատարութեան Տեսակետները Նահանգապետութեան Տարածում Քրդերի Վերաբնակցման Մասին», Բանքեր Հայաստանի Արխիների, N 1-2, 2007, էջ 31-36. նաև՝ նոյնի՝ Արամ Մանուկեան. Կեսարը Եւ Գործը (Ազատազրական Հարժման Եւ Անկախի Պետականութեան Վերականգնման Ուղիներում), Երեւան, «Լուսակն» Հրատ., 2008. նաև՝ Ռոբեր Սահակեան, «Հայկական Ռուսիկանութեան Կազմակերպութը Եւ Գործունեութիւնը Վանի Նահանգապետութեան Ծրագրում (1915 թ. Մայիսի 8-Յուլիսի 17), Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Խնսութուտ 2008. նաև՝ Արամ Մանուկեան: Փաստարդերի Եւ Նիւրերի Ժողովածու, զիս. խմբ. և կազմ.՝ Ա. Վրարեան, կազմողներ՝ Գ. Աւագեան, Մ. Աւելիսեան, առաջարանի հեղինակ՝ Ա. Արեւան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխի, 2009. նաև՝ Ռոբեր Սահակեան, «Արամ Մանուկեանը Վանի Նահանգապետութեան Պատմուկեան Ազգային Եւ Պետական Գործիքը (Յօդուածների Ժողովածու), Երեւան Պատմութեան Խնսութուտ, 2010, էջ 25-51. նաև՝ Ա. Հ. Յարութիւնեան, «Վանի Նահանգապետութեան Պարենային Քաղաքականութիւնը (1915 թ. Մայիս-Յուլիս)», Եզրիածին, Դ., 2010, էջ 56-61:
- <sup>5</sup> Նա 1915 Մայիսի 16ին իրաժարում է այդ պաշոսնից, պատճառաբանելով, որ իր կրրական ցննդն աւելի քարձը է քան նախազան Խաչիկ Ջենորեանինը (Արամ Մանուկեան: Փաստարդերի Եւ..., էջ 77-78):
- <sup>6</sup> Տերյան, Գիտական Եւ Հրապարակախոսական, էջ 326-328:
- <sup>7</sup> Ամերիկացի Ֆիլիպն Ջերրեն Աշրի յուշերի համաձայն, քրդական ցեղերի մեծ մասն արագործ ընդունել էին ռուսական համակարգիւն, սակայն յարնար պահը չին կորցնում հայերի վրայ յարձակուելու համար (Clarence D. Usher, Grace H. Knapp, *An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace and War*, Houghton Mifflin Company, Boston, N.Y., 1917, էջ 288):

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 132, թ. 47:

<sup>9</sup> Նոյն, ֆ. 50, գ. 1, գ. 13, թ. 22:

<sup>10</sup> Բարոնի հայութիւնը Վան է ուղարկում բժշկական խոճ՝ թիշկ Թաշճեանի զիստորութեամբ: Խումբը մինչեւ Վան ժամանելը գործում էր Վաղարշապատի շրջանում և բժշկական օգնութիւն էր ցոյց տախ գաղթականութեամբ (ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 384, թ. 115):

<sup>11</sup> Մշակ, Թիֆլիս, N 142, 3 Յուլիս 1915. նաև՝ ՀԱԱ, ֆ. 27, գ. 1, գ. 245, թ. 17 և 2րդ:

<sup>12</sup> Այսինքն Բուժակներ:

<sup>13</sup> Հորիզոն, Թիֆլիս, N 127, 10 Յունիս 1915:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 239, գ. 1, թ. 26: Թուրք եւ բուրդ բաղարացիական բնակչութիւնը գտնում էր ուս նշանաւոր գրադ Լե Տուստոյի դատեր՝ Ալեքսանդրայի հովանաւորութեան ներքոյ: Կոստուիին կամաւոր ծառայում էր Վանու տեղակայուած Հանապետական Քաղաքների Սիմբռան Կարսի Խաչի բազարերում (Usher, Knapp, էջ 292-293. նաև՝ ՀԱԱ, ֆ. 239, գ. 1, թ. 1, թ. 26): Աւելին, Վանի նահանգապետութիւնը նաև իր վրայ է վերցնում միսիոներների մօտ ապաստանած բրդուիների սննդի մի մասի հոգածութիւնը: Հայաստանի Ազգային Արխիվում պահպանուել է ամերիկեան միսիոներներ Աշորի եւ Էռնեստ Եարուի Յունիսի 8ին գրուած նամակը, որ նրանք խնդրում էին Արամին՝ պարէնով ապահովել իրենց հաստատութիւններում գտնուող բուրք եւ բուրդ կանանց ու երեխաներին: Նրանց կարիքների համար տրամադրութ է տաս ոչխար (ՀԱԱ, ֆ. 242, գ. 1, թ. 9, թ. 13):

<sup>15</sup> Վա՛Շ-Տուապ, Թիֆլիս, N 30, 19 Յունիս 1916, էջ 14:

<sup>16</sup> Սահակեան, Հայկական Ուստիվանութեան Կազմակերպութը, էջ 37, 46-50, 53, 66:

<sup>17</sup> Այս մասին աւելի մանրանասն տես մեր գրախօսականը՝ Բանքեր Հայաստանի Արյունական թիւ 2, 2004, էջ 187-203, Alexandra Barkhturina, *Okraini Rossiyisko Imperii: Gosudarstvennoe Upravleniye I Natsionalnaya Politika V Godi Pervoy Mirovoy Voiny (1914-1917gg.)* (Ուստական Կայսրութեան ծայրանասները. պետական կառավարութ եւ ազգային բաղարականութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին (1914-1918 թթ.), Սոսկուա, Ռուսիա, 2004, էջ 208-222. <http://www.armarchives.am/UserFiles/File/02-04.pdf>

<sup>18</sup> Կովկասեան Բ. հրաձագային բրիգադի հրամանատար գեներալ Թովմաս Նազարեկանն իր յուշերում անդրադարձել է այդ «գերակշխու» ուժերի յարձակմանը: Նա յուշագրում է. «Ձուկատի շաար կապի համար գործուղուել էր Լարինսկեան կազմակային» գնդի խորունժքի (ազգանունը չեմ յիշում): Նա յետագայում իմ շտարի սպաներին պատմել է, եթե Մուշի դաշտից Յուլիսի 9ին Լարինսկեան Գնդի հրամանատարն ինձ համար զեկուցագիր էր պատրաստում՝ դիմեց սպաներին եւ ասաց, որ պէտք է հարկադրել գեներալ Նազարեկովին նահանջեր: Հարցեց, թէ որքան թռչուն կայ ծառի վրայ՝ ինչ որ մէկը հաշուեց եւ ասաց՝ 12: Դէ այդպէս էլ զեկուցէք, որ Մշոյ դաշտից յարձակում են 12 թարգուներ (գումարտակներ - Ռ.Ս.):» (ՀԱԱ, ֆ. 45, գ. 1, թ. 3, թ. 48 շրջ. 49):

Թուրքական օքրի նման բուարանակը, որը ընկել էր վերը նշուած հրամանատարի կնդ զեկուցագրի հիմքում, առ այսօր օգտագործում է ուստական պատմագրութեան մէջ՝ որպէս արդարացում 1915 Յուլիսի 11ի նահանջի:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 1457, գ. 2, թ. 28, թ. 16 շրջ.:

<sup>20</sup> Ա.-Դ. Մակեդոնիա, Ս. Պետերբուրգ, «Պուշկինեան Արգատիայ» Հայկական Տպարան, 1903:

<sup>21</sup> Նոյն, էջ 12-13:

<sup>22</sup> Ա.-Դ. Հայրենիքի Կարուոր, Ս. Պետերբուրգ, «Պուշկինեան Տպարան», 1905, էջ 7:

<sup>23</sup> Ա.-Դ. Միքայէլ Նալբանդեանի Կեանքի Հետարքիր Սի Էջ Եւ Բակումինի Նրան Գրած Նամակները, Երևան, Տպարան «Առյա» Արշակ Յակովեանցի և որդիիք, 1908:

- <sup>24</sup> Ա-Դօ, Հայ-Թուրքական Ընդհարումը Կովկասում (1905-1906 թ.). (Փաստական, Վիճակագրական, Տնտեսական Լուսարամարիններով), Երևան, Տպարան Այլազեանց և Նազարեանց, 1907:
- <sup>25</sup> Ա-Դօ, Վաճի, Քիրիսի Եւ Երգումի «Արայէրները», Երևան, Տպարան «Կուլտուրա», 1912: «Յուշեր Տաճկահայատանի Ծանապարհորդութիւնից» յօդուածաշարը տպագրում է Նոր Հոսանք թերթում (1913-1914 թ.), տակայն թերթի փակման պատճառով մնում է անաւարտ: Գիտնականի արխիվում պահպանում են մի շարք անտիպ ուսումնասիրութիւններ՝ «Հայութեան Երկունքը», 899 մերենագիր եջ: Այս հիմնականում նոյնիուած է 1918 Մայիսեան հերոսամարտերին և Հայատանի Հանրապետութեան ստեղծմանը, «Ուսական Ցարերը Եւ Հայկական Հարցը», «Ժմ Յուշերը» եւն: Նշուածներից առաջին Երկուսը ՀՀ ԳԱԱ Պատմութեան Խնամականութեանը պատրաստում է երատարակութեան:
- <sup>26</sup> Ա-Դօ, Ազատագրական Շարժումը Ռուսաստանում Իր Ծագման Առաջին Օրերից, Երևան, Տպարան «Լոյս» Արշակ Յակովլեանցի և որդիի, 1908:
- <sup>27</sup> Հովհան, Թիֆլիս, N 39, 11 Հոկտեմբերի 1915, էջ 609: Տես՝ Ա-Դօ, Մեծ Հայքերը Վասպուրականում 1914-1915 Թուականներին, Երևան, Տպարան «Լոյս», 1917:
- <sup>28</sup> ԺԹ դարի ընթացքում Ռուսաստանը մի քանի անգամ պատերազմել է Թուրքիայի դեմ՝ 1806-1812, 1828-1829, 1853-1856 և 1877-1878 բուականներին:
- <sup>29</sup> Նկատի ունի Երիտրուրքական Միուրին և Առաջադիմուրին (İttihat Ve Terakki) Կուսակցութեանը, որին նաև կոչում էին ԺԷօն (բուրքերն յօնտürkler- Երիտրասարդ) Թուրքեր: Երիտրուրքական այս կուսակցութիւնը հիմնուել է 1889 թ.: 1908 թ. Երիտրուրքերը զահրնեց արեցին սովորան Արդու Համբի Բ. ին և հոչակեցին Օսմանեան Թուրքիայում սահմանադրութեան վերականգնումը: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին 1914-1918, Երիտրուրքերը ծրագրեցին և իրականացրին օսմանահպատակ հայերի ցեղասպանութիւնը, որին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր: 1919-1920 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած դատավարութեան ժամանակ Երիտրուրքերի պարագնութերը դատավարութեցին հեռակայ մահապատժի:
- <sup>30</sup> Արդու Համբի Բ. (1842-1918) Օսմանեան Կայսրութեան սովորան (1876-1909), յայունի և նաև «Շուրմիր սովորան» անուանը հայերի և այլ քրիստոնեայ ժողովութերի նկատմամբ զանգուածային կոտորածներ կազմակերպելու համար: 1894-1896 նրա դրդմամը Թուրքիայում տեղի ունեցած հայերի կոտորածներ, որին զոհ գնացին 300 հազար հայեր:
- <sup>31</sup> Երիտրուրքերը պատերազմի նախօրեակին քանտերից ազատ արձակեցին քրեական յանցագործներին, որոնցից կազմուեց Թէշքիյարը Մահատմէն (յատուկ կազմակերպութիւնը): Նրանցից կազմուած ջոկատներն օգտագործուեցին հայերին կոտրելու համար: Կազմակերպութիւնը ընդորկել էն մոտ 40 հազար հոգի:
- <sup>32</sup> Դէյր է Զօր, անապատային քաղաք Միրիայում, Եփրատի աջ ափին: 1914-1918 այնուղի և նրա շրջակայրն արտորուեցին հայերը, որտեղ նրանք ենթարկուեցին ոչ միայն դանդաղ և տառապալից սովորական, այլև բուրքերի յարձակումներին: Շրջակայ արաք բնակչութիւնը զգալի օգնութիւն ցուցաբերեց տարագիրներին և որոշ բուով հայեր փրկուեցին շնորհի այդ օգնութեան:
- <sup>33</sup> Արսորական հայերը Դամասկոսի և հարավային այլ քաղաքներում վաճառուեցին քացառապէս մահմնականների:
- <sup>34</sup> Վանը կազմուած էր Երկու քաղամասերից՝ Այգեստանից (23,000 հայ) և Քաղաքամեջից (2,300 հայ): Վերջինս համարում էր քաղաքի գործարար կենտրոնը: Այստեղ էին գտնուում շոկան, խանութները, պահեստները, արհեստանոցները եւն: Բնակչութիւնը հիմնականում բնակուում էր Այգեստանում: Երկու քաղամասերի միջև գտնուում էր բուրքական քաղամասը (18,000 հոգի): 1915 Մարիլի 7ից մինչև Մայիսի 4ը Երկու քաղամասերը ինքնապաշտպանական մարտեր մղեցին բուրքական կանոնաւոր գորքի և քրդական ջոկատների դեմ: Ընորհի դիմադրութեան և

ուսական թայագետի Չոկատի, որի կազմում էր Հայկական Կաճատրական Արարատեան (Ե.) գունդը, Վանը և նահանջի բնակչութեան զգայի մասը փրկուեց կոտորածից:

Ռուսական բանակի վաճ շարժուելու նախաձեռնութիւնը պատկանում էր հայ կամատրներին, բանի որ ռուսական հրամանատարութիւնը նպատակ չուներ Վանը գրաւել: Այդ մասին աւելի մանրամասն տես՝ David Martirosian, "Vanskaya Operatsia – Epizodei Artyanskoy i Ruskoy Istory" (Վանի գործողութիւնը՝ հայկական և ռուսական պատմութեան դրուագներ), (<http://www.regnum.ru/news/1161786.html>):

Ռուսաստանի հայազգի պատմարանը մերժելով բորբական թիր տեսակետը, թէ իր Վանում հայերն ապստամբել են, որպէսզի օգնեն ռուսներին, ռուսական արխիմետից թիրած համապատասխան փաստարդերով ապացուցում է, որ Կովկասեան բանակն իր առջև նպատակ չէր դրել գրաւել Վանը: Ռուսները Վան տանող ճանապարհի վրայ յայտնում են պատահարար, երբ հետապնդում էին Դիլմանի ճակատամարտում պարսութիւն կած Խալիլ թէյի գօրամիատրին, որը փախչում էր Վանի ուղղութեամբ: Խալիլը ցանկանում էր միանալ Վանը պաշարած իրայիններին և վերջ տալ հայերի ինքնապաշտպանութեանը: Վկայակոչուած փաստարդերով եւ դրանց հիման վրայ կատարած եղրակացութիւններով Մարտիրոսեանը հերրում է խորհրդահայ այն պատմարանների տեսակետը, թէ ռուսական զօրքն է զպատագրել Վանը: Այդ մասին կարեւոր տեղեկութիւններ են պահպանուել Արարատեան Գնդի հրամանատար Վարդանի (Սարգիս Մնիքարեան) անտիպ յուշերում: Նա վկայում է, որ Արարատեան Գունդը, հակառակ թայագետի Չոկատի հրամանատար գօրավար Ա. Նիկոլաևի, որոշում է յառաջանալ և օգնել Վանի պաշտպաններին: Վարդանը վկայում է, որ զնիերի հրամանատարներ Դրօն (Դրաստանատ Կանայեան), Համազասպը (Սրուանձտեան) եւ Շենին (Արշակ Գաւաֆիան) միական էին: Վարդանը ներկայանում է գօրավար Նիկոլաևին և յայտնում իրենց որդշնան մասին, ասելով: «Զերդ Մեծութիւն: Մենք գնում ենք առաջ Հայ ժողովուրդը ռուսաց զէնքի, ուժի կարիքը մինչև արժմ այնքան չի զգացել, ինչպէս ներկային: Մի օր շուրջ կը հասնենք վան՝ կը փոկենք ժողովրդին, մի օր ուշ կը հասնենք՝ կոտորուած ժողովրդին կը թաղենք: Մենք առաջ գնալով՝ հեռախոսի կապը կը պահպանեմ Ձեզ Հետ, միշտ Ձեզ իրազեկ կը պահեմ ճանապարհին պատահած կրիսների մասին, ևս յոյս ունեմ, որ եթէ մեծ ուժերի հանդիպենք եւ Ձեր օգնութեան կարիքը զգանք՝ չէք մերժի մեզ օգնութեան համեմել»: Սորան պատասխան ստացայ, թէ «Կ’աշխատեմ» (ՀԱԱ, Ֆոն 402, ցուցակ 2, գործ 10, թերթ 93-94): Բարերախտարար, ճանապարհին, բացի մի բանի փորբիկ ընդհարումներից, կամատրները որեւէ դիմադրութեան չեն հանդիպում: Մայիսի 5ի նրեկոյնան Խեջոյի (Դաշնակցական Խեջօ, Խաչատուր Ամիրեան-Գեորգեան) հեծելավաշտը հասնում է Վան: Նրան դիմադրում է Արանը: Մայիսի 6ին, առաօտեան ժամը 6ին, բաղար են մտնում կամատրական Բ., իսկ ժամը 12ին՝ Դ. զնիերը, ապա թայագետի Չոկատի հիմնական ուժերը:

<sup>35</sup> 1915 Ապրիլի 1ին Շատախի գաւառի Կենտրոն Թաղում սկսում են ինքնապաշտպանական մարտեր: Թաղու, որ բաժնում էր երեք բաղամասերի՝ Վերին, Ներքին և Զրաղացի, գտնում էր Սիվտկնա և Վերին Տիգրիս գետերի միախառնման և երեք խորունկ ծորերի միացման վայրում: Արմենակ Եկարեանի վկայութեամբ, Շատախը յայտնի էր օսմանեան բռնատիրութեան դեմ իր ընդդումներով: Նկատի ունենալով տեղի հայուրյան յաման և անզիջում պայքարը բուրք եւ բուրդ հարստացների դէմ, Եկարեանը գաւառը համենատում է Ջերունի հետ (Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, Տպ. Աստղ, 1947, էջ 185): Մայիսի 14ին Թաղ է հասնում Հայկական Կաճատրական Բ. Գունդը՝ Դրոյի հրամանատարութեամբ: Բացի Վանից եւ Շատախից, ինքնապաշտպանական մարտեր են ընթանում նաև Գաւաշում, Փեսանդաշտում եւ այլ վայրերում:

- <sup>36</sup> 1915 Մայիսի 7ին ուստական երամանատարութիւնը Վանի ժամանակաւոր կառավարից (նահանգապետ) է նշանակում ազատազրական շարժման ականաւոր գործիչ, ՀՅԴ անդամ Արամ Մանուկեանին (Սարգիս Յովհաննիսինան): Փաստորեն, հայութիւնը ԺՇ. դարում Սիւնիքի և Արցախի հայկական իշխանութիւնների կորստից յնույ հնարաւորութիւն է ունենալու ստեղծելի իր ինքնավար մարմինը:
- <sup>37</sup> 1915 Յունիսի սկզբին Վանում կազմատրում է զեներալ Տրուխինի ջոկատը, որը բաղկացած էր Երևանեան սահմանապահ գումարտակից, Զարկալեան Բ. Առանձին Կազակային Բրիգադի 12 հարիւրեակներից, Կովկասիան Լեռնահեծելազօրային Մարտկոցից, Արարատեան և Ա. Խմբերից: Միաւորումից յնույ հայ կամաւորների ընդհանուր մարտակազմը հասնում է 5500 հոգու:
- <sup>38</sup> Նկատի ունի Քաղաքամէջը:
- <sup>39</sup> Վանի ինքնապաշտպանութեան ժամանակ, բացի Մարտական, Կարմիր Խաչի, Զինազործական և այլ ստորաբաժանումներից, կազմակերպութեր էր Ամրաշէն խումբը՝ մօտ 1800 հոգի, որը սակրատորական բնոյրի աշխատանքներ էր կատարում: Նրա անդամները պաշարման ընթացքում կառուցում էին դիրքեր, խրանաւուներ և այլ տեսակի ամբողջիւններ ու միաժամանակ հակառակորդի կրակի տակ վերականգնում էին բնդանօրների կրակից վնասուած կամ քանդուած դիրքերը:
- <sup>40</sup> Նիկոլ Ալբալեան (1873-1947)՝ հայ քաղաքական-պետական գործիչ, գրականագետ, ՀՅԴ անդամ: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին գործունասնակցութիւն է ունեցել կամաւորական շարժմանը և նարտական գործողութիւններին: 1914 Սեպտեմբերի 10ին ընդգրկուել է «Հայ Կամաւոր Խմբերի Կարգադրի Մարմին»ի կազմում: 1915 Յուլիսի 10ին Եշանակուել է Արարատեան Գնդի աւագ համհարզ, Քանաքեռ գիւղում (Անդրկայուս Երևանի տարածքում) տեղակայուած պահեստային խմբի իրամանատար: 1918 Մայիսի 28ին Հայաստանի անկախութեան հոչակումից յնույ ընտրութել է խորհրդարանի անդամ, իսկ 1919ին նշանակուել է Լուսաւորութեան Նախարար: Հայաստանու խորհրդային կարգեր հաստատուելուց յնույ, 1921 Փետրուարին ծերրակալուել է, սակայն Փետրուարեան Ապստամբութիւնից յնույ ազատութել և հեռացել է արտասահման: 1930ին ընակուել է Բեյրութում, որտեղ գրադրուել է մանկավարժական գործունելութեանը (R. Shatirian, "Kratkiy Ocherk Deyatelnosti Armyanskikh Dobrovolcheseskikh Drujin 1914-1916gg.", (համառու ակնարկ հայ կամաւորական խմբերի գործունելութեան 1914-1916pp.), *Armyanskiy Vestnik*, Մոսկով, թի 10-11, 12 Սարտի 1917, էջ 13. նաև՝ ՀԱԱ, ք. 1267, գ. 2, գ. 50, թ. 111):
- <sup>41</sup> Նկատի ունի Վանի Թագաւորութեան ժամանակ Մենուա արքայի (Ք.ա. 810-786) կառուցած ջրանցքը, որի երկարութիւնը 42 կմ. է և գործուն է առ այսօր:
- <sup>42</sup> Գաւառապետն էր Լեռն Գարրիկեան, նրա օգնականը՝ Զաւեն Կորկուտեանը, իսկ ուստերեն քարզմանչը՝ Հ. Պալապերեանը:
- <sup>43</sup> Ախավանք, Ախավանաց, Ախավանը՝ գիտ Վասպուրականի Շշուունից գաւառում, վանայ լճի հարավային ափին, Աղքամար կղզու դիմաց: Ի. դարի սկզբին ուներ 250 հայ բնակիչ: Աղքամար վանքի նաւահանգիստն էր: Պատմից Թովմա Արծունին Ախավանքը յիշատակում է որպես Աղքամար վանքի կալուածք:
- <sup>44</sup> Գագկի Արծունի (879-մօտ 943) Վասպուրականի թագաւոր 908ին:
- <sup>45</sup> Անդրանիկ (Օգանեան, 1868-1927)՝ հայ ազգային-ազատազրական նշանաւոր գործիչ, ֆիդայի: Մասնակցել է հայրենակային մի շարք կոխների: Անկավարել է 1904ի Մասունի հայութեան ընթացքութիւնը: Թալկանեան Առաջին Պատերազմի ժամանակ (1912 Հոկտեմբերի 9-1913 Մայիսի 30) հայկական ստանձին կամաւորական վաշտի հրամանատար Գարեգին Նժենեի տեղակալ: Առաջին Համաշխարհային Պատերազմի ուսւ-բորբական ուզմաճականութեան Հայկական Ա. Կամաւորական խմբի հրամանատար: 1918 Յունուարին նշանակուել է Հայկական քանակային կորպուսի դիրիգիտայի հրամանատար: Նոյն անսում նրան շնորհուել է ուստական քա-

նակի գեներալ-մայորի կրծում: ՀՀ կառավարութեան հետ ունեցած տարակարձութիւնների պատճառով 1919ին հեռանում է արտասահման:

- <sup>46</sup> Կայծակ Առաքել (Տիգրան Արագեան, 1869-1916)՝ հայ ազատազրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՅԴ անդամ: 1904ին Սաստի ապստամբութեան մասնակից: 1905-1906՝ հայ-քարարական (աղրբեջանական) ընդհարումների ժամանակ գործել է Երևանում: Մասնակցել է պարսկական յեղափոխութեանը (1905-1911): Սասնակցել է 1915 Ապրիլի 7ից մինչև Մայիսի 4ը Վանի Այգեստան քաղամասի ինքնապաշտպանութեանը, եղել է Վանի Ղինուրական Մարզի անդամ: 1916-1917 Երզնկայում գրադուել է հայ զարքականների օգնութեան և բորբերի մօտ բնի պահուող հայ Երեխանների, կանանց և աղջիկների փրկութեամբ:
- <sup>47</sup> Սարգիս Մեհրաբեան (Խանասորի Վարդան, ?-1943)՝ հայ ազգային-ազատազրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1890ին աշխուժ մասնակցութիւն է ունեցել հայողուկային շարժմանը: 1896ի գարնանը դեկավարել է Շատախի ինքնապաշտպանութիւնը: 1897ին գլխաւորել է Խանասորի արշաւանը: 1905-1906՝ հայ-քարարական քախումների ժամանակ դեկավարել է Նարարադի հայութեան ինքնապաշտպանական կոխինները: Պատերազմի սկզբում գլխաւորել է Հայկական Ե. Կամաւորական Գունդը, որը գենը շինելու պատճառով չի մասնակցել մարտական գործողութիւններին: 1915 Ապրիլի 1ից գլխաւորել է Արարատեան Գունդը: Կամաւորական գնդերի լուծարումից յատոյ հեռացել է քաղաքական գործունեութիւնից: Ունի անտիպ յուշեր:
- <sup>48</sup> Դրո (Դրաստամատ Կանայեան, 1884-1956)՝ նշանաւոր ուազմական, քաղաքական և պետական գործիչ: 1914-1916՝ Հայկական Բ. կամաւորական խմբի երամանատար: 1917 Դեկտեմբերին նշանակուել է Հայկական Ազգային Կորպուսի կոմիսար: 1918 Մայիսին դեկավարել է Բաշ Ապարանի ճակատամարտը: 1920 Նոյեմբերին նշանակուել է ՀՀ Ղինուրական Նախարար: 1920 Դեկտեմբերի 2ին Հայաստանի խորհրդայնացումից յատոյ, որպէս անցման շրջանի գինուած ուժերի հրամանատար, դեկավարել է իշխանութիւնը մինչև Ֆեղոսի Երեւան ժամանելը: 1923ին հեռացել է արտասահման:
- <sup>49</sup> Քեոի (Արշակ Գաւաթեան, 1858-1916)՝ հայ ազգային-ազատազրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1904ի Սաստի ինքնապաշտպանութեանը և 1905-1906՝ հայ-քարարական ընդհարումներին: 1908ին պարսկական յեղափոխութեան ժամանակ Եփրեմ Խան Դաւթեանի օգնականն էր: 1914-1916՝ գլխաւորել է Հայկական Դ. Կամաւորական Գունդը: Այդի ընկեր Սարիդամիշի ճակատամարտի ժամանակ, որի ընթացքում իրեն դրսեւորել է որպէս հմուտ հրամանատար: Զոհուել է 1916ին Ռեւանդուզ քաղաքի մօտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ:
- <sup>50</sup> Խեչօ, Դաշնակցական Խեչօ (Խաջասոր Ամիրեան-Գեորգեան, 1868-1915)՝ հայ ազատազրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1897ին մասնակցել է Խանասորի արշաւանքին և 1905-1911՝ պարսկական յեղափոխութեանը: Առաջին Համաշխարհային Պատերազմը սկսելուց յատոյ գինուրազրուել է հայ կամաւորական շարժմանը, սկզբում եղել է Դրոյի օգնականը, իսկ 1915 Ապրիլի 1ին Արարատեան Գունդի կազմաւորուելուց յատոյ նշանակուել է Վարդանի տեղակալ և հեծելավաշտի հրամանատար: Զոհուել է 1915 Ֆուլխի ճիմ: Ինչպէս նշում է Ս. Վրացեանը: «Եկեղոյք մահը, կարծես, խորհրդանիշ եղաւ: Նրանից յետոյ մենք ուրախ օրեր չտեսանք» («Եղիզոն», Թիֆլիս, N 2, 3 Յունուարի, 1916):
- <sup>51</sup> Միքայէլ Արզումանեան:
- <sup>52</sup> Համազասպ Սրբանձտեան (1873-1921)՝ հայ ազգային-ազատազրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1905-1906՝ հայ-քարարական ընդհարումների ժամանակ կազմակերպել է Նարարադի, մասնաւորապէս Գանձակի հայութեան ինքնապաշտպանութիւնը: 1908ին Ճերքակալուել է ուսական իշխանութիւնների կողմից յօրին-

ուած «Դաշնակցութեան գործի» հետ կապուած եւ դատապարտուել է 15 տարուայ արտրի, որը կրելու էր Սիրիոս։ 1913ին յաջողուել է փախչել արտրավայրից։ ՀՅԴ Ը. Ընդհանուր Ժողովի պատգամաւոր (Գումարուած 1914ի Յուլիսի 25-Օգոստոս 17)։ Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եղել է Գ. Կամատրական Գնդի հրամանատար։ Մասնակցել է 1918ի Բարտի հայոթեան պաշտպանութեանը։ Հայաստանի Հանրապետութեան կազմատրումից յետոյ նշանակուել է Նոր Բայազէտում (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գաւառ) տեղակայուած զօրբերի հրամանատար։ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ ճերքակալուել և 1921 փետրուարին սպաննուել է Երևանի բանտում։

<sup>53</sup> Եարա՝ բաղար Ռուկրախնայում, Սե Ծովի Կրիսի թերակղզու հարաւային ափին։

<sup>54</sup> Կարծում են, որ Ա-Դօն այս բուաբանակի մէջ չի մտցրել Ալաշկերտի հովտի, Պարսկահայրի (Հիսխասյին Ասրպատական) հայութեանը, բանի որ նշուած շրջանները համարում էին Արեւելեան Հայաստան։ 1915-1916ին դեռևս ամբողջութեամբ յայտնի չեր հայութեանը հասցուած արհաւիրքի ողջ ծաւալը։

<sup>55</sup> 1914 Ապրիլի 14ին «Տիտանիկ» շոգենաւոր, որը Սաութենմփտընից (Մեծն Բրիտանիա) զնում էր դեպի Նիս եռոր, բախում է մի հսկայ սաոցարենկորի, որի հետեւանը 1316 ուղենորից և անձնակազմի 908 անդամից փրկում են միայն 711 հոգի։

<sup>56</sup> Եղիշը (քուրք. Yıldız Sarayı՝ աստղային պալատ), սուլթան Արդուլ Համիդ Բ.ի նստավայրը։

---

ASPECTS OF THE HISTORY OF THE ADMINISTRATION OF VAN  
(JUNE 14-JULY 7-JULY 25, 1915) AND A-DO  
(Summary)

RUBEN SAHAKYAN  
rubensahakian@mail.ru

During WWI the Ottoman Empire launched its plans of massive extermination and deportation and carried out its genocidal policy against the Ottoman Armenians. In reaction to these acts, certain Armenian towns and cities of Western Armenia and Asia Minor took up arms in self-defense.

The population of the city of Van was the first to take up arms against the Turks. The defense of the city extended from April 7 to May 4, 1915. Eventually they were rescued by the Armenian volunteer troops of the Russian Army, who were the first to arrive to Van.

On May 7, the Russian Army command appointed Aram Manoogian as administrator of Van and its provinces. In a short period Manoogian established a regional administration and its subsidiaries, which won the trust of the population. Soon Eastern Armenian scholars with administrative experience volunteered to work in the municipality of Van. In recruiting administrators Manoogian prioritized competence over partisanship and social stature.

The author notes that since the disappearance of the Armenian princedoms of Sunik and Artsakh in the 18<sup>th</sup> century, this was the first time Armenians had had the chance to establish a political entity in an area exclusively inhabited by Armenians, as the Turks had left the area. Nonetheless, the Russian authorities were unhappy with the activities of the Armenian administration and particularly concerned with the fact that Van could become the center of an Armenian autonomous region.

On July 11, 1915 the Russian authorities ordered the retreat of the army, for no real reason. The retreat occurred haphazardly, and the Armenian authorities had no time to organize the defense of the city. The Armenians were left with no choice but to leave the city and take refuge in Eastern Armenia. The experience gained by Manoogian during this period became an asset for him as he later on assumed the *de facto* leadership of the Yerevan Armenian National Council and, as of July 1918, held the post of Interior Minister of the Republic of Armenia.

Against the backdrop of these developments Sahakian brings to light the eye-witness account of Hovhannes Der Krikorian (1867-1954), one of the best Armenian intellectuals of the time. Der Krikorian, known to scholarly circles by the name of A-Do, extensively researched Armenian liberation movements, socio-economic conditions, the administrative structure as well as gathering statistics on the population and settlements of Western Armenia. He personally went through the region of Van, registering and taking and took details of the resistance fights as well as details on the massive massacres of the Armenians, and published them as a research book in 1917.